

4175

3K7

4-22

RECORDED
INDEXED
U. S. DEPT. OF JUSTICE
FEB 10 1910

=1 DEC 2009

Է. ՎԱՆԴԵՐՎԵԼԴ

300
1691-40

ԻԴԵԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԳԱՐԻՏԱՅԻ ՄԵԶ

01 JUL 2005

4-22

✓ 9362

٤



ԻՌԵՄԼԵԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ-ԲՍԻՉՄԻ ՄԷՋ

Ն. Գ. Նինի «Վանդերվելլը մարքսիզմի մասին»
վերջաբանով

Թարգմ. Ս. Տէր-ԱՆԱՆԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԷԲԱՐԱԶԱՐԺ ԽԱԿԱՐԱՆ «ՀԵՐԱՄԷԱ» ԸՆԿ. ՄԱԳ. ՓՈՊ. № 5.

1907

(239)

3127 12422

2-28 Sept 1958
Chapman 139

[illegible]

2005 JUL 1 0

4175

Հայ լեզուի ու գրականության սարածման աշխատող

ԱԶՆԻԻ ԲԱՐԵԿԱՍ Կ. ՄԻՔԱՅԷԼ ԱԼԵԱՆԱՔԱՆԷԼ

Անկեղծ սրէ

Նուիրում է

Հրասարակիչ:

Ասում են մի անգամ, Ֆրանսիացի սօցիալիստ-ները շրջանում, երբ նրանցից մէկը հարցրեց Մարքսին. «գուք որ կուսակցութեանը կառավարէիք, եթէ ապրէիք Ֆրանսիայում», Մարքսը պատասխանեց. «չգիտեմ, բայց յամենայն դէպս ես մարքսիստ չէի լինի»:

Այս բանը մենք հաղորդում ենք իբրեւ անեկդոտ, սակայն ճշմարիտ է թէ մտացածին, գոնէ բնորոշ է այն կերպարանաւորութեան կամ աւելի ճիշտը՝ այն աղճատման տեսակէտից, որին մարքսիզմը ենթարկւեց, անցնելով սահմաններ և ամեն տեսակ թարգմանութիւններ ու հակիրճ գրական կամ ճարտասանական յարմարացումներ կրելով:

Մարքսի հետ նոյնը պատահեց, ինչ Դարվինի և առհասարակ բոլոր խոշոր նաւատորների հետ. — խոր նկատողութիւնների, զգուշաւոր ու միաժամանակ յանդուգն արտածութեանց պատկառելի աշխարհից վայրենացնողները, նրանց ետևից էլ ամբողջ, ֆրագների կտորտանքներ ու գաղափարների թափթըփուկներ միայն պահեցին մտքերում:

Դարվինը համարեա ամբողջ կէս-դար աշխատեց իր հետազօտութիւնների վրա: Նա գրեց տեսակների զարգացումը: Յայտարարեց մաշդու ծագումը: Յեղափոխեց բնական զիտութիւնները, իսկ սրանց հետ և մեր տիեզերագիտութիւնը. սակայն ահագին մեծամասնութեան համար նրա ուսմունքը երկու կէտի է

յանգում. նախ՝ ա) մարդը առաջացել է կապիկից. — այն ինչ իսկապէս Դարվինի հայեցակէտով նրանք երկուսն էլ ընդհանուր նախահայր ունին, և բ) գոյութեան կոխը՝ պրօգրեսի գործօն է, որ օրինական է դարձնում ուժեղների ճնշումը թոյլերին. — այն ինչ Դարվինը շատ անգամներ պնդել է ընկերակցութիւնների առաւելութիւնը գոյութեան կուռում:

Կարլ Մարքսը սօցիալիստական գաղափարն այնպէս ուժեղ արտայայտեց, որ առ ժամանակ ծածկեց իր ամենանշանաւոր նախորդներին: Նա ստեղծեց նոր քաղաքական ճանապարհ: Վերամշակեց պատմութեան մեթոդները: Կապիտալիստական ուժիմին խորտակիչ քննադատութիւն ընծեռեց: Իսկ ի՞նչ մնաց այդ բոլորից բրօշիւներ կազմողների ու ժուրնալիստների մեծամասնութեան համար: — Քանի մի բանաձևեր. «աշխատանքը կազմում է աղբիւր ամեն արժէքի», «գասակարգային կռիւը կազմում է պատմութեան հիմքը» կամ «տնտեսական կեանքի արդիւնաբերութեան եղանակը որոշում է ընդհանրապէս կեանքի հասարակական, քաղաքական կամ մտաւոր ընթացքը»:

Ուշադրութեան առէք, որ այս կտորներն ազաւաղած չեն. բայց ախր ամբողջ բնագրից բաժանում ու բացարձակ նշանակութիւն են տալիս նրանց. ուշք չեն դարձնում յետագայում տեղի ունեցած լրացումներին ու նորոգմանը, և այդպիսով, մի ամբողջ շարք կրճատումներից ու խեղաթիւրումներից յետոյ ստացւում է այն, որ ուսմունքի միայն անորոշ գծերը, կմախքն է պահւում, որ բոլորովին չի նմանում Մարքսի իսկական դօկտրինին:

Շատերի համար, օրինակ պատմութեան մատերիալիստական հասկացողութիւնը — մարքսիզմի այդ անկիւնաքարը — գաղափարին զրկում է գործնական որևէ նշանակութիւնից: Բարոյականութիւնը, իրաւունքը, կրօնը կամ փիլիսոփայութիւնը, այդ բոլորը կողմնակի երևոյթներ են, առանց ջերմութեան, ու վատոյժ ցոլքեր, արդիւնք կամ թէկուզ տնտեսական գործունէութեան արդիւնքների արդիւնք: Սօցիալիզմին գալով, նա էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կապիտալիստներին սեփականագուրկ անելու մի գործ: Նա պէտք է հեռու մնայ որևէ հարցից, որ ուղղակի կամ անուղղակի չի դիպչում հարստութեան շահեցմանն ու նրա կարգաւորմանը: Եւ նրանք, որոնք ճգնում են սօցիալիզմը շահագրգռել ուրիշ խնդիրներով, ինչպէս օր. բարոյականութեան յառաջագիւմութեամբ, եղեղեցու դէմ կռիւ մղելով, պետական կազմի այլ և այլ ձևերով՝ հանդիսանում են օրօրողներ, պրպտողներ, նրան իր առաջաւոր նպատակից շեղողներ: Մեր ի՞նչ գործն է Դրէյֆուսը, Մերսիէն, նախարարութիւնը կամ միապետութիւնը. սօցիալական յեղափոխութիւնը կազմակերպելը, մնացածն ինքն իրեն կգայ... Հասկանալի է, որ այդ կերպով պատմական մատերիալիզմը վատ են ըմբռնում նրանք, որոնք սօցիալիզմին մօտենում են կամ փորձում են մօտենալ զգացումի շարժառիթներով: Մեր ընկեր Պօլ Լաֆարգը, որ ամենից աւելի սիրում է վախկոտ մարդկանց երկիւղի մէջ ձգել իր ուսմունքի ծայրահեղ տարօրինակութեամբ, շարունակ յայտարարում է նրանց, թէ արդարութիւնը, ազատու-

թիւնը, եղբայրութիւնը, պրօգրեսը—կուռքեր են, ուրիշ ոչինչ, որոնց բուրժուազիան ձեւաւորել է ժողովուրդին ստրկութեան մէջ սանձելու նպատակով. սակայն նրանք յամառում են կարծելու շարունակ, թէ գաղափարները՝ ոյժ են, թէ արգարութիւնը դատարկ հնչիւն չէ, թէ իրաւունքը, քաղաքականութիւնը և կրօնը գուցէ և վերջ ի վերջոյ բացատրւում են «իրենց տակ թաղնւած տնտեսական գործօններով», բայց և այնպէս ահագին ազդեցութիւն ունեն հասարակութեան էվօլյուցիայի վրա: Եւ իրաւ, եթէ մարքսիզմը ժխտէր այդ ազդեցութիւնը, եթէ նա ձգնէր, որպէս այդ պնդում են յաճախ, սօցիալական խնդիրը իշխեցնել ստամոքսի խնդրի աստիճանին, սօցիալիզմը սահմանափակէր նիւթական շահերի շրջանակներում—աւելի վատ կլինէր մարքսիզմի համար. երբէք սօցիալիստական գիտակցութիւնը չի տանի իր իդեալի նման ոչնչացումը, երբէք չի համաձայնի հոգեկան կեանքի բովանդակ աշխարհը տալ հնադարեան կրօններին և հնագոյն փիլիսոփայութեան: Սակայն, չենք յապաղում նկատելու, որ Մարքսի ուսմունքի նմանօրինակ հասկացողները դրանով ցոյց են տալիս միայն իրենց մակերեսային հասկացողութիւնը: Այս առթիւ ուշադրաւ են Լօբարդէմօնի խօսքերը. մի տող գիր տւէք ինձ, ով ուզում է գրած լինի, և ես հնարաւորութիւն կգտնեմ նրան կախաղան հանելու: Այնպիսի բարդ աշխատանք, որպէս Մարքսինն է կամ Բէնանինը՝ միշտ էլ կարելի է կորզել մի քանի ֆրագներ, որոնցից հանւի համարեա ամեն միտք, ինչ ցանկանաս: Սակայն հարկաւոր է

ուսումնասիրել ամբողջ աշխատութիւնը իր ծագման և զարգացման մէջ, որպէսզի հասկացւի հեղինակի իսկական միտքը:

Այս մեթօդը եթէ յարակցենք Մարքսի մտաւոր ստեղծագործութեանը, դիւրին կլինի բացադրել նրա մատերեալիզմի լոկ թւացող պաղութիւնը, նրա սիստեմատիք շանքերը՝ երբէք զգացմունքի շարժառիթներով չմօտենալ աշխատանքին, մի աշխատանք, որ սկզբից մինչև վերջ սուր ու այրող հրաւէր է դէպի արդարութիւնը: Նրա գրելու ձեւը բնական կատարեալ րէալիցիա էր լոկ մտքի ու խօսքի այն բարձրերի նըկատմամբ, որ իշխում էին այն ժամանակ: Յիշեցէք, իսկապէս, 48 թւականի յեղափոխութեան նախընթաց տարիները: Ամենուրէք իշխում էր սանտիմենտալիզմը: Ցնորական (ուտոպիա) սօցիալիզմը բուրժուական իդէօլօգիայի կողքին էր կանգնած: Ինչպէս Կոմմունիստական մանիֆեստն է ասում՝ սօցիալական փիլիսոփայութիւնը իր գաղափարների սնանկութիւնը ծածկել էր «մի շորով, հիւսւած իմացականութիւնը փխրուն հիմքի վրա, ասեղնագործած հռետորութեան ու սրամտութեան ծաղիկներով. թրջած՝ որպէս ցօղ, տենդոտ և քնքոյշ սանտիմենտալականութիւնով»:

Հեզելեան վարդապետութիւնը Դերմանիայում թաղւեց կատարեալ միստիցիզմի մէջ: Փուրիէի, Սեն-Սիմօնի և Օվէնի համարեա բոլոր աշակերտներն ուժահատել էին Փրանսիայում և Անգլիայում բուրժուազիայի բարեհաճութեանն անհեթեթ հրաւէրներ կարդալով, չցանկանալով բանւոր մասսաներին յարելու: Մի խօսքով, սօցիալիստների մեծամասնու-

թիւնը, ինչպէս և նրանց հակառակորդները մեծագոյն մասը համաձայն էին ինչ որ սօցիալօգիական մտաւոր գրութեան պաշտամունքում. գաղափարները, նրանց կարծիքով սաւառնում էին բարձրում, հեռու նիւթական շահերի «ստոր» ազդեցութիւնից, և կարծես միանգամայն անկախ հասարակական կենցաղաւարութեան անկողնակալ պայմաններից:

Հէնց այդ պահուն երևում է Մարքսը, ունենալով արդէն բազմաթիւ նախորդների մի խումբ:

Պատասխանելով Պրուդօնին, որ հրատարակել էր «Աղքատութեան փիլիսոփայութիւնը», նա գրում է «Փիլիսոփայութեան աղքատութիւնը»: Ճշտիւ որոշելով հասկացողութիւնը, որի կորիզը գտնւում է մինչև նա եղած բազմաթիւ աշխատութիւնների մէջ, նացուցադրում է այն նշանաւոր հայեցակէտը, որը նորից ու նորից շարունակ հանդէս է գալիս նրա գործերում, որպէս Leitmotiv, որպէս հիմնական տեսութիւն,—հայեցակէտ, թէ տնտեսական կարիքներն իշխում են մարդկութեան ամբողջ մտաւոր կեանքի վրա:

«Հասարակական յարաբերութիւնները սերտ կապւած են արդիւնաբերող ոյժերի հետ: Արդիւնաբերող նոր ոյժեր ձեռք բերելով, մարդիկ փոխում են արդիւնաբերութեան ձևերը, իսկ փոխելով արդիւնաբերութեան ձևերը, այն է գոյութեան համար միջոցներ ձեռք բերելու եղանակները՝ նրանք փոխում են բոլոր իրենց հասարակական յարաբերութիւնները: Երկանքը ձեզ կտայ ֆէօդալական հասարակութիւն,

շողիով ջրաղացը—կապիտալիստական արդիւնաբերութեան հասարակութիւն»:

«Միևնոյն մարդիկ, որ իրենց համար հասարակական դիրք են ստեղծում համաձայն արդիւնաբերող յարաբերութեանց՝ իրենց սկզբունքները, գաղափարներն ու մտածութեան եղանակն առ հասարակ՝ մշակում են նոյնպէս համաձայն իրենց հասարակական դիրքին»:

«Այդպիսով այդ գաղափարներն ու մտածութեան եղանակը նոյնքան քիչ են յաւիտենական, որքան և նրանցով արտայայտող դիրքը: Նրանք պատմականօրէն անհրաժեշտ անցւոր արդիւնք ենք միայն» *):

Այդ է, թէև սուղ, բայց իր էական գրութեամբ մարքսիզմի գերիշխող իդէան:

Հարկաւոր է ընդգծել այդ հայեցակէտի յեղափոխական բնոյթը:

Հասարակական երևոյթների շարքում դա շարժումն է անշարժութեան փոխարէն,—իրազեկութիւն, իդեօլօգիայի ներփակումով: Մարքսի իրեն խօսքերով, հեգելեան դիալեկտիկան, որ քայլում էր գլխիվայր, ոտքի է կանգնեցրած: Պատմութիւնը այլ ևս վիպասանութիւն—բնագանցութիւն չէ: Կապիտալիզմը վերջնական ուժիմ չէ, այլ պատմական մի արգասիք, որ արդէն յղի է նոր ուժիմով: Սխառէմներ հնարողների ձեռքից սօցիալիզմը դուրս է գալիս և վճռաբար մտնում գիտական շրջանը: Ի հարկէ, սօցիալիստներն ամենից քիչ պէտք է այդ փրկարար յեղափոխութեան արժանիքը վերագրեն մէկ մարդու:

*) Մարքս «Փիլիսոփայութեան աղքատութիւնը»:

դա կնշանակէր մասնաւորի սեփականութիւն դարձնել հաւաքական աշխատանքի արդիւնքը:

Նոր Մեսսիայի կրօնը Սեն-Սիմօնիստներին թողնենք, եթէ նրանք դեռ գոյութիւն ունեն: Մենք գիտենք, որ պատմութեան մատերիալիստական հասկացողութիւնը առաւել չափով չի պատկանում Մարքսին, որքան ձևափոխութիւնը (տրանսֆորմիզմ) Դարվինին կամ «ժողովուրդների հարստութիւնը»՝ Ադամ Սմիտին: Եւ մենք գիտենք Նոյնպէս, — որ այդ կոլումբոսեան հաւկիթի պատմութիւն է, — որ մարքսիստական շատ գաղափարներ այնքան պարզ են երևում, որ նրանց հեղինակներին ուրիշ ոչինչ ինքնուրոյնութիւն չի մնում: Այժմ ամբողջ աշխարհն ընդունում է մատերիալիզմը **), որպէս պ. Ժուրդէնին է ասում, պրօգաի տեղ:

Հիւսիսային Բելգիայում, երբ քարածուխի շերտեր են լոյս ընկնում, Լիէժի եպիսկոպոսը եզրակացնում է, թէ այդտեղ սօցիալիզմը կյայտնւի:

**) Մեզ թւում է, թէ տնտեսական մատերիալիզմին ցանկալով աւելի բարձր նշանակութիւն տալ, Վանդերվելդը միայն ստորացնում է նրան: Պատմական պրօցեսի տնտեսական կողմը պարզաբանել, դեռ ևս չի նշանակում տնտեսական մատերիալիստ լինել: Տնտեսական մատերիալիզմը խզճուկ կլինէր իր պարունակութեամբ, եթէ պարփակէր այս տարրական ֆօրմուլի մէջ. «Երբէք չմոռանաք պատմութեան տնտեսական կողմը»: Այն կարևոր դրութիւնները, որոնք տնտեսական մատերիալիզմի բնորոշ սեփականութիւն են կազմում, շատ աւելի բարդ են, — որ սակայն չի նշանակում, թէ նրանք այս կամ այն չափով ուղիղ են»:

Ծան. Գ. Նին:

Երբ անգլիացիք պատերազմում են Տրանսվաալի հետ, ուխտենդերների իրաւունքները պաշտպանելու համար, ոչ ոք չի կասկածում, որ նրանց իսկական շարժառիթը առևտրական շահն է, ոսկէ հանքատէրերի մասնաւոր օգուտը:

Մինչև իսկ նրանք, որոնք այնպիսի մոլեգնութեամբ խարազանում են Մարքսի թէօրիան, նրանք էլ խոստովանում են պատմութեանը տնտեսական բացատրութիւն տալու անհրաժեշտութիւնը:

Պատմական մատերիալիզմը, — զրում է պրօֆէսօր Մասսարիկը, — կամ, աւելի լաւ է ասել, տնտեսական գործօնների աւելի արդարացի գնահատութիւնը և իդէօլօգիական ազդեցութիւնից նրանց ճշմարիտ գնահատութիւնը կեանքի ու հասարակութեան դարգացման հետ յարակցելը՝ այսուհետև կազմում է սօցիօլօգիայի, պատմութեան և քաղաքագիտութեան անհերքելի գիտելիքների մի բաժինը:

Բայց, Մարքսի հակառակորդները, եթէ ընդհանուր առմամբ ընդունում են նրա թեզիսի գլխաւոր մասը, դրանով աւելի բռնն գայրոյթով են խօսում մարքսիզմի բացառիկ դրութեան մասին, պատմական մատերիալիզմը պախարակելով երկու բանում. 1) որ նա ժխտում է այն բնական գործօնները, որոնք հասարակութեան տնտեսական կազմն են որոշում. 2) որ նա բացասում է բարոյագիտական և մտաւոր գործօնների անտարակուսելի ազդեցութիւնը: Նման կշտամբանքների անարդարութիւնը մի քանի անգամ արդէն ապացուցւած է: Մենք, յամենայն դէպս, օգտակար ենք համարում մի անգամ էլ կանգ առնել



դրանց վրա, քանի որ դրանք նորից և նորից են երևան գալիս սօցիալիզմի հակառակորդների կողմից:

Ամենից առաջ մեզ ասում են, թէ հասարակութեան տնտեսական կառուցվածքը առաջնակարգ փաստ չէ. որ դա այն յարաբերութիւնների հետեանքն է, որ ազգաբնակչութեան և միջավայրի մէջ հաստատւած են. որ, հետեապէս, հասարակական երեւոյթները պարզելու ժամանակ հարկաւոր է նկատի ունենալ ցեղը, կլիման, հողի բնական արդիւնաբերութիւնը, տեղի աշխարհագրական դիրքը:

Դա հասկանալի է ինքնըստինքեան: Բայց որտեղից իմացան, որ պատմական մատերիալիզմի հիմնադիրները երբեիցէ հերքել են նման ակնյայտ ճշմարտութիւնները *):

Եթէ կտորներ բերելու առիթ ունենայինք հակառակն ապացուցելու,—ուրիշ շատերի հետ կարող էինք մատնացոյց լինել «կապիտալի» երրորդ հատորի հետեւալ բնորոշ տեղը: Յիշելով քաղաքագիտական կարգերի կախումն ու ստորադրութիւնը

*) Հարցը նրանում չէ, թէ այդ ակնյայտի ճշմարտութիւնները հերքում են, այլ նրանում, թէ այդ գործօնների նշանակութիւնը շիտակ է ձեւակերպւած տնտեսական մատերիալիզմի սիստէմի մէջ և որոշւած է ճշտութեամբ նրանց պատմական տեսակարար կշիռը: Մի բնագանցագէտ չէր գտնւի, որ սկսէր հերքել այն պարզ ճշմարտութիւնը, թէ ուտել—խմելը հարկաւոր է, սակայն այդ չի նշանակում, թէ իդէալիստ—բնագանցագէտը ըմբռնում է այն պատկառելի դերը, որ մարդկութեան պատմագրութեան մէջ խաղում է «ստամոքսի ձայն» ասւած գործօնը:

Ծան. Գ. Բին

տնտեսական հիմունքից՝ Մարքսը յայտարարում է. «դա չի խանգարում, որ միևնոյն տնտեսական հիմքը, գոնէ ընդհանուր գծերով, իրականութեան մէջ կարողանայ ներկայացնել անվերջ զանազան տարբերութիւններ կախւած տնտեսական հազար ու մի պայմաններից, ցեղական յարաբերութիւններից, պատմական ազդեցութիւններից ու այլ փոփոխութիւններից, որ կոնկրէտ պայմանների վերլուծութեամբ միայն կարելի կլինի հասկանալ»:

Այդպէս ուրեմն, իրաւունք չկայ պատմական մատերիալիզմին հասարակութեան պատմական կառուցվածքը բացատրելու անմիտ յաւակնութիւն վերադրել, առանց ուշադրութեան առնելու բնական հանգամանքները, որ ընթացք են տալիս այդ կառուցվածքին:

Մարքսը և Էնգելսը, նկատելու համար, թէ հասարակածային Աֆրիկայի անտառներում ցրւած նեգրերը պէտք է այլ քաղաքագիտական և հասարակական տնտեսութիւն ունենան, քան արիացիք, որ ապրում են Եգէյեան ծովի կղզիներում կամ սեմիտները Դեղին գետի ափերին՝ Ֆուլիէի և Մասսարիկի օգնութեան կարիքը չունէին: Սակայն, թէև նրանք միջավայրի ու ցեղական գերակշռող ազդեցութիւնը խոստովանում են հաւասարակշռութիւնը չխախտելու նպատակով, բայց և միւս կողմից պնդում են նրանց աւելի անզօր կամ մինչև իսկ չզօյ նշանակութիւնը դինամիքական տեսակէտից:

Նրանց կարծիքով, բնական պայմանների փոփոխութիւնը չէ, որ հասարակական կազմը յարատե

փոփոխութեան է ենթարկուած: Կլիման, ցեղը, երկրի աշխարհագրական դիրքը, հողի պտղաբերութիւնը պատսիւ տարրեր են, ինքնաբերաբար չփոփոխւող գործօններ: Միակ ակտիւ տարրը, միակ գործօնը, որ առաւելապէս յեղափոխական է,—գա մարդկային արդիւնաբերութիւն է, տնտեսական պայմաններն են, այն փոփոխութիւնն է, որ տեղի ունի կենսական անհրաժեշտ պայմանների մէջ:

Եթէ Ֆրանսիայի կլիման այժմ այն չէ, ինչ
Կեսարի ժամանակների Գալլիայինը՝ պատճառն այն
է, որ քաղաքակրթութիւնը փոխել է ուղղման ձևն
ու անտառների դասաւորութիւնը: Եթէ հռոմէական
դարից ի վեր բնակչութեան բարքերը փոխել են՝ դա
բացատրոււմ է նրանով, որ հասարակական բնաւո-
րութիւն ունեցող կարիքները բարբարոս ցեղերի
գաղթն առաջ բերին: Եթէ միջերկրական ծովի աւա-
զանը այլևս դադարեց քաղաքակրթութեան կենտրոն
լինելուց՝ դա բացատրոււմ է նրանով, որ ապրանք-
ների փոխադրութեան զարգացումը առևտրական հա-
ղորդակցութիւններն ուրիշ տեղ փոխեց: Թէև բնա-
կան հարստութիւնները այժմ շատ աւելի բազմաթիւ
պահանջների են բաւարարութիւն ապրիս, քան նախ-
նական ժամանակներում, այդ նրա համար է, որ
գիտութիւնը և գործնական կեանքը միջոցներ են
գտել նրանց շահեցնելու, իսկ—երկրի բերքերի նկատ-
մամբ—նոյնպէս շատացնել նրանց: Մի խօսքով, բը-
նութիւնն ինքը չի փոխել, մարդն է փոխել նրան:

Այսպէս են Մարքսի հայեցակէտերը: Այդ բո-
լորի մէջ, ի հարկէ, նշանաւոր չափով ճշմարտու-

Թիւն կայ: Բայց և այնպէս, զորոք զայն իմաստովն զորոքն զոռնել առանց մասնակի սահմանափակումի:

Դէպքեր կարելի է մասնանշել, երբ հասարակա-
կան կազմի փոփոխութիւնները բացառապէս կախա-
ծէին բնական պայմանների մէջ ինքնագոյաբար առա-
ջացող փոփոխութիւններից: Չէր կարելի Բրիւզգէի
առևտրա-արդիւնաբերական անկումը բացատրել, ա-
ռանց ուշադրութեան առնելու Յվիյնի աղբով կալ-
նւելը, որ Բրիւզգէի բնակիչներին զրկեց ծովի հետ
հաղորդակցութիւն ունենալուց: Կամ վերցնենք աւելի
բնդհանուր օրինակ. չի կարելի ոսցիօլօգիան ուսում-
նասիրել առանց հետեւելու ազգաբնակչութեան աճման
ազդեցութեան հասարակական կեանքի բոլոր երևոյթ-
ների վրա:

Նկատենք, սակայն, որ այդ աճույնը քաղաքակրթութեան և արդիւնաբերութեան սկզբնական վիճակում շատ նեղ շրջանակների մէջ էր պարփակւած, որ, միւս կողմից, ֆիզիքական միջավայրի խնքնագոյ փոփոխութիւնները կարող են նկատի առնուել իբրեւ լոկ երկրորդական դործօններ արւեստական այն փոփոխութիւնների համեմատութեամբ, որ մարդկային աշխատանքն է ներմուծում: Այդպէս ուրեմն, խնդիրը քննելով ընդհանուր գծերով պատմական կարճատեւ մոմենտի տեսակէտից, պէտք է խոստովանել, որ հողի արդիւնաբերութեան փոփոխութիւնների վրա ամենից աւելի ներգործութիւն ունի մայրկային արդիւնաբերութիւնը: Պարզ է, որ այդ յարատեւ փոփոխութիւնները չեն սահմանափակում բնական պայմաններով: Նրանք կազմում են պատմութեան գլխաւոր շարժիչ

$$\begin{array}{r} 1003 \\ \hline 12422 \end{array}$$

ոյժը, նախ և առաջ նրանցից է, որ կախած են քաղաքական և կրօնական յեղափոխութիւնները: Սակայն դրանից չէ հետևում, մարքսիստներն էլ չեն պնդում այն, թէ մտաւոր ու բարոյական գործօնները հասարակական էվոլյուցիայում դեր չունեն:

Սակայն այդ կարծիքը դեռ նրանց վերագրում են: Օրինակ, անցեալ տարի Ֆրանսիական փիլիսոփայութեան ընկերութեան միջ Գալեվին հակաճառելով Սօրելին, այն միտքը պաշտպանեց, թէ Մարքսի ուսմունքով հոգեկան տարրի փոխադարձ ազդեցութիւնը մարմնականի վրա—անկարելի է, և որ այդ անկարելիութեան մէջ էլ կայանում է պատմական մատերիալիզմի էութիւնը: Բայց նա չափի մոռանար, որ մարքսիզմն այդ ձևով բացատրելով, ժխտում է ոչ միայն էնգելսի խոստովանութիւնը, այլ և Մարքսին իրենը, երբ սա խօսում է ոչ իբրև սխտեմատիք—փիլիսոփայ, այլ իբրև հրապարակախօս և կուսակցութեան պարագլուխ:

Այդպիսի կամայական բաժանում մենք չենք կարող ներել մի աշխատանքի մէջ, որի բոլոր մասերը փոխադարձաբար լրացնում ու լուսաբանում են իրար: Աւելին. Մարքսը միայն իր պամֆլետների և Խնտեր-նացիօնալի հրահանգների մէջ չի գաղափարների ազդեցութեանը խոշոր նշանակութիւն վերագրում: Նրա թեզիսները Ֆէյերբախի մասին, գրւած 1845 թ. կտրական կերպով պնդում են, թէ փիլիսոփայութիւնը պիտի լինի ոչ միայն իրերի դիտողութիւն, այլ և նրանց վրա ներգործելու միջոց: Միևս կողմից չի կարելի ընդունել մարքսիզմի խորհրդածութիւն-

ները, ուր ուշադրութեան չի առնւած նրա հիմնական դրութիւնների այն զարգացումը, որ էնգելսի, Մարքսի այդ հոգեղբօր աշխատութիւնների մէջ տրւած է: Իսկ էնգելսը 1890—1895 թւականների իր նամակներում կտրուկ յայտարարում է, թէ քաղաքագիտական, իրաւաբանական, փիլիսոփայական և կրօնական պրօցեսները իրենց հիմք ունեն տնտեսական զարգացումը, բայց և, որ նրանք փոխադարձաբար ազդում են և իրար տնտեսական հիմքի վրա: Ուստի և մենք իրաւունք ունենք եզրակացնելու, թէ մարքսիզմը հեգելեան դիալեկտիկան ոտքի կանգնեցնելով, չկտրեց նրա գլուխը: Ամենաշատը, որ կարելի էր մատնանշել, այն է, որ հակառակ ծայրահեղութեան վուում պատմական մատերիալիզմի ստեղծողները լրիւ չգնահատեցին գաղափարական գործօնների նշանակութիւնը: Իսկ մեր կարծիքով, աւելի ճիշտ կլինէր, եթէ ասէինք, որ նրանք այդ հասկանում էին ինքնըստինքեան, քանի որ, չնայելով արտաքինին, նրանց ամբողջ աշխատանքը ներշնչւած է գաղափարականութեան հզօր թափով: Կապիտալիզմը քննադատելիս նրանք դիմում են մտածողութեան ամենավերացական ձևերին, սակայն, վերջնապէս, նրանց գատողութիւնները հիմնւած են բարոյական բնոյթ ունեցող պահանջի վրա՝ ըստ արդարութեան ամեն բանւոր պէտք է իր աշխատանքի արդիւնքը ստանայ ամբողջութեամբ: Սօցիալիզմի յաղթանակն ապահովելու համար նրանք յոյսները դնում են տնտեսական, նոյնպէս և բարոյական ու մտաւոր ոյժերի գործունէութեան վրա. — ամբողջ կոմմունիստական մանիֆեստը՝

ջերմ հրաւեր է բանւորութեան գիտակցութեան, նրա եռանդին, ձեռներեցութեանն ու համերաշխութեան գգացումներին: Վերջապէս, հէնց տնտեսական ոյժերի փոխադարձ ազդեցութիւնը մարդկային հոգու մշտնջենական միջամտութիւնը չի ենթադրում արդեօք: Ամենայն իրաւամբ պնդում են, թէ երկաթուղի շինելով, գործարան կառուցանելով, քարածուխի հանքեր գտնելով, նոր մեքենայ հնարելով աւելի շատ են ազդում քաղաքագիտութեանն ու կրօնին, քան հարկւրաւոր ճառեր ու շարադրութիւններ: Բայց ի՞նչ են այդ հետախուզութիւնները, գիւտերը, տեխնիքական այդ յեղափոխութիւնները, եթէ ոչ մարդկային խելքի յարակցութիւնը նիւթին:

Կառուցկին ասում է, թէ պատմական մատերիալիզմը չի ժխտում մարդկային խելքի շարժիչ ոյժը հասարակութեան մէջ, այլ միայն ուրիշ բացատրութիւն է տալիս այդ ոյժի գործողութեանը, քան ընդհանրապէս ընդունւած է: Խելքը տնտեսական պայմաններին չի հանդիսանում տէր, այլ ծառայ: Տնտեսական պայմաններն են թելադրում նրան իր անելիքը, նրանք են միջոց տալիս այն ի կատար ածելու: Մարդկային խելքի ընդունած ուղիղ նպատակը կարող է և միանգամայն կանխամտածւած լինել, բայց և որոշումներից իւրաքանչիւրը պարտաւոր է իր հետեանքներն ունենալ, որ ըստ մեծի մասին խելքը չէր նախատեսել և որոնք յաճախ հակասում են նրա ենթադրութեանը: (Կառուցկի Was will und kann die materialistische Geschichtsauffassung leisten? Neue Zeit, 1896—1897, 1, p. 231):

Մենք կցանկանայինք երկար կանգ առնել այդ հետաքրքիր էսիւդի վրա, որից քաղում ենք այս կտորը. դա գեղեցիկ միջոց կլինէր ցոյց տալու, որ այն յանդիմանութիւնները, որ յաճախ անում են նրանց, որոնց զուր տեղը ուղղափառ մարքսիստ են համարում՝ անարդար է: Որպէս և Մարքսն ինքը, նրանք չեն ցանկանում առերես միատիկ լինել: Նրանց համար, ինչպէս և բոլորի համար՝ արդիւնաբերութեան և փոխանակութեան պրօցեսը անհրաժեշտաբար հոգե-ֆիզիքական մի գործ է: Տնտեսական կազմակերպութիւնը, ինչպէս և ամեն հասարակական կազմ,—մարդկային խելքի ստեղծագործութիւնն է, կցորդւած իրականութեանը: Այն, ինչ նրանք այնքան էլ որոշակի չեն անւանում պատմական մատերիալիզմ՝ կարող է և իդեալականութիւն անւանել, որովհետեւ նրանք ընդունում են, որ իւրաքանչիւր հասարակական երևոյթ միւլտիպլ ժամանակ և բանական փաստ է*): Միայն ինքնըստինքեան, այդ մարքսիստա-

*) Մէկ որ այդ հայեցակէտն ընդունում են, պարտաւոր են նրանից բղխող բոլոր անհրաժեշտ եզրակացութիւններն անել. այն է, որ տնտեսագիտութիւնը, իրաւունքը և սօցիալական իդեոլոգիան սօցիալական կեանքի լոկ վերացականօրէն, երեւակայութեամբ կորցած կողմերն են. կեանք, որ իրապէս անբաժանելի ամբողջութիւն է, որ այդ երեւակայութեան բաժանւած կողմերը չեն կարող մէկը միսին հակադրւել պատճառական տեսակէտից, որպէս հիմք և շէնք, կամ զրա նման մի բան: Ուրեմն, առաւել ևս անկարելի է զարգացման պրօցեսի այդ կողմերից որն էլ լինի, գիտել իրրեւ ինչ որ ինքնագոյ և «վերջ ի վերջոյ» միւս բոլորի զարգացումը պարզաբանող: Ծան. Գ.Նին.

կան իդեալականութիւնը իր էութեամբ տարբերում է սովորականից: Փոխանակ քաղաքագիտութեան մէջ տեսնելու բարոյականութիւն, կրօն, փիլիսոփայութիւն—երևոյթներ, որ մասամբ կամ ամբողջովին անկախ են տնտեսական միջավայրից՝ մարքսիստական իդեալականութիւնն, ընդհակառակը, հաստատում է, որ «հասարակութեան տնտեսական կազմը իրական հիմքն է, որի մէջ կրօնական, փիլիսոփայական և այլ հիմնարկութիւնների բոլոր շէնքերը իւրաքանչիւր շրջանում վերջ ի վերջոյ գտնում են իրենց բացատրութիւնը» (էնգելս): Մեզ թւում է, թէ այստեղ հէնց տեղն է որոշ կասկած յայտնելու, առարկութիւններ ձևակերպելու կամ գոնէ մի քանի հարցում անելու:

Մենք, ի հարկէ, տնտեսական որպէս աւելի հասարակ, նոյնպէս և աւելի ընդհանուր երևոյթներ գերիշխող նշանակութիւնը լիովին ընդունում ենք. «*primo vivere, deinde philosophari*» (նախ ապրել, յետոյ փիլիսոփայութիւն անել): Ամեն օր մենք դիտում ենք արդիւնաբերական փոփոխութիւնների յեղափոխական ազդեցութիւնը: Դեռ Կօնտը նոյնը պընդում էր իր զրական փիլիսոփայութեան 6-րդ հատորում: Վերջապէս մենք անհնարին ենք գտնում իրաւունքի, բարոյականութեան ու կրօնների պատմութեանը բանական բացատրութիւն տալ, առանց հաշի առնելու նիւթական կեանքի արտադրութեան եղանակների ձևափոխութիւնները: Սակայն այդ չի նշանակում, թէ պէտք է աւելի առաջ գնալ և ենթադրել, ինչպէս այդ երբեմն անում է, կամ ըստ

երևոյթին ահում է Մարքսը, թէ նիւթական կեանքի արտադրութեան եղանակները հասարակական, քաղաքական և մտաւոր կեանքի պրօցեսները որոշող մի մի ազդակներ են: Նման տեսութիւնները, որ ուղղակի թէ անուղղակի, իդեօլոգիայում տեսնում են տնտեսական երևոյթների պարզ արդիւնքը՝ նոյն այն շրջաւարութիւնների մէջ են ընկնում, ինչ և փիլիսոփայական մատերիալիզմը, որը պնդում է, թէ նիւթը ծնում է հոգի, թէ ուղեղը մտքեր է արտադրում, ինչպէս լեարդը՝ լեղի: Միանգամայն իրաւացի է, որ մենք մաքուր հոգի չենք կարող ըմբռնել. մենք չենք կարող միտքը բաժանել նիւթական էութիւնից, սակայն, փոխանակ էական տարբերութեան կամ հոգու և նիւթի պատճառականութեան յարաբերութիւնը սահմանելու՝ մօնիզմը թէ մէկը և թէ միւսը նկատի է առնում որպէս միեւնոյն գոյութեան երկու կողմերը: Մենք չենք կարծում նոյնպէս, որ որևէ գարաշրջանի բարոյագիտութիւնը, փիլիսոփայութիւնը և կրօնը կարող էին անկախ լինել իրենց ժամանակի կամ անցեալի տնտեսական պայմաններից: Մենք չենք կարող սօցիալական մտաւորը անշատել սօցիալական նիւթականից: Այնուամենայնիւ, այն բանից, թէ գաղափարների էվօլիցիան սերտ կապւած է նիւթական էվօլիցիայի հետ, չի հետևում, թէ մէկը հանդիսանում է միւսի պատճառ: Մեզ համար անհատկանալի է, երբ ապում են, թէ Բեթհովէնի կամ Մօցարտի սիմֆոնիան, Կանտի կամ Սպինոզայի բնագանցական փիլիսոփայութիւնը, Մահմեդի կամ Քրիստոսի կրօնը—արդիւնք են այն հասարակական միջավայրի,

որի մէջ նրանք ծնւել են: Դա միևնոյն է, եթէ ա-
սէինք, որ բոյսը արգիւնք է հողի, որովհետեւ սերմը,
որպէսզի ծիւ արծակի, հողի կարիքն ունի: Որպէս
բոյսն առանց հողի չէր կարող գոյութիւն ունենալ,
նոյնպէս և զեղարւեստի արտադրութիւնները, կրօն-
ները կամ փիլիսոփայական սիստեմները չէին կարող
գոյութիւն ունենալ առանց տնտեսական կազմի, ա-
ռանց հասարակական պայմանների, որոնք հնարաւոր
են դարձնում նրանց գոյութիւնը. բայց նրանք չէին
լինի և առանց մարդկային բանականութեան, որ
ստեղծում է նրանց: Ուստի, անհեթեթութեան մէջ
չընկնելու համար, պէտք է ասել, որ իդեոլոգիաները
տնտեսական միջավայրի արգիւնքը չէ, որ հանդիսա-
նում են, այլ այն յարաբերութիւնների, որ հաստատ-
ւում են մարդկային խելքի և տնտեսական միջավայրի
մէջ: Եւ, ասենք, այդ արտայայտութիւնը մինչև ան-
գամ շատ թոյլ էր: Տնտեսական և սոցիալական պայ-
մանների տարբերութիւնը կարող է մեզ համար
պարզել կրօնների և փիլիսոփայական սիստեմների
տարբերութիւնը, բայց ոչ նրանց նմանութիւնը, նը-
րանց ընդհանուր գաղափարները: Որպէս էլ լինի հա-
սարակութեան տնտեսական կազմը, լինի խաղաղական
հովիւներինը, թէ 20-րդ դարի բանւորներինը՝ մարդ
ակամայից ստիպւած է մի շարք այնպիսի խնդիրնե-
րի լուծումը որոնել (կամ պատրաստի վճիռն ըն-
դունել), որոնք ոչինչ ուղղակի առնչութիւն չունեն
նիւթական կեանքի արտադրութեան եղանակի հետ՝
կայ աստուած թէ ոչ, ազատ է կամքը թէ ոչ, անմահ
է մարդու հոգին թէ ոչ: Փիլիսոփայական և կրօնա-

կան սիստեմները հանդիսանում են արտացոլումներ
կամ աւելի ճիշտը, գաղափարականացումներ ոչ միայն
տնտեսական իրականութեան, այլ և ամբողջ բնաւ-
կան կեանքի ընդհանրապէս: Իսկ եթէ նրանց մշտա-
կան նշանները համապատասխանում են այն բանին,
ինչ անփոփոխելի է բնութեան մէջ, ապա նրանց փո-
փոխութիւնների կամ առանձնայատկութիւնների
պատմութիւնը կարելի է ուսումնասիրել միայն հա-
սարակական տնտեսական կեանքի առանձնայատկու-
թիւնների ու փոփոխութիւնների հետ ծանօթանալով:

Եւ այն, ինչ ընդունելի է կրօնների և փիլիսո-
փայական սիստեմների պատմութեան համար, առա-
ւել և ընդունելի է իրաւունքի և քաղաքագիտական
հիմնարկութիւնների պատմութեան համար:

Պատմական մատերիալիզմը — եթէ այդ ընդհա-
նուր ընդունւած տէրմինը գործածելու լինենք*), —
նախ և առաջ մենք հասկանում ենք իբրեւ մեթոդ,
իբրեւ միջոց հաւաքական կեանքի մակերևոյթային
երևոյթները բացատրելու այնպիսի գործոններով, որ
քիչ են յայտնի, սակայն շատ են ազդեցիկ ու պահ-
ւած են հասարակութեան տնտեսական գրկում:

*) Կրօնէն ուղիղ է ասում. «Ես ամոստում եմ, որ
ընտրել են մատերիալիզմ խօսքը, որը ներկայ դէպքում շատ
անորոշ նշանակութիւն ունի, երկար թիւրիմացութիւնների
տեղիք է տալիս և մեր հակառակորդներին միայն իբրեւ
զէնք է ծառայում: Պատմութեան նկատմամբ ես սիրով գործ
կածէի պատմութեան ռեալական հասկացողութիւնը արտա-
յայտութիւնը, որ պարզապէս ամեն աստուածաբանութեան և
բնագիտական փիլիսոփայութեան հերքումն է ընդգծում
պատմութեան մէջ («Պատմական մատերիալիզմը և մարք-
սիստական տնտեսագիտութիւնը»):

Պատժական որևէ երևոյթ ուսումնասիրելիս ամենից առաջ նկատում են այն շարժառիթները, նրա այն սկզբունքները, որոնք ազդարարւում են ի լուր աշխարհի: Միացեալ Նահանգները երբ Սպանիային պատերազմ են յայտարարում՝ մեզ ասում են թէ ինչիւնքը Ղուբայի յեղափոխականներին օգնութեան հասնելու մէջ է, գաղութների անկախութեան համար է, որ այնպէս անպատկառ շահագործւում են միտրօպոլիտութիւնից, գեն. Վէյլերի սոված գերիւններին օգնելու համար է, և, ի հարկէ, այդ ազատամտական և մարդասիրական բացատրութիւնները ազդեցութիւն են ունենում խելքերի վրա և ոգևորութիւն առաջացնում. սակայն, պատերազմի միւս շարժառիթների հետ էլ ծանօթանալու համար, այն շարժառիթների, որ այնպիսի խնամքով թաղցնում է շահագրգռած կողմը, անհրաժեշտ է պատմութեան մատերիալիստական բացատրութեանը դիմել: Յանգուզն հետախոյզերը կարողանում են երևան հանել այդ շարժառիթները անտեսական աստառ ունեցող բարոյագիտութեան, քաղաքականութեան և կրօնական ձեերի երեքծալ շերտի տակից. ամերիկացի հարուստները վազուց արդէն ձեռնարկել են Ղուբայի տիրապետութիւնը. 30-ից մինչև 50 միլիոն թափել շաքարի անկարաններում ու գործարաններում. ապստամբութեան վերջն իսկ անկարելի է գուշակել. իսկ վաճառականութիւնը տուժում է դրանից, Սպանիայի անտանելի շահամոլ քաղաքականութիւնը արգելք է դառնում առևտրին. Միացեալ Նահանգները, աւելին արտադրելուց նեղւած, ստիպւած են, ինչ էլ լինի,

նոր շուկաներ գտնելու, ծայրագոյն Սրեկքում ամրանալու, Սադաղ ովկիանոսին տիրելու. իսկ որպէսզի այդ հսկայական միտքը յաղթանակի, ոպանական գաղութները պէտք է ոչնչացւեն: Կեցցէ ազատ Ղուբան... Կորչեն Փիլիպպեան մենակիցները:

Պատմաբանը կամ պետական գործիչը, ուշադրութիւն չդարձնելով այդ թագնւած պատճառների վրա, չի կարող գնահատել անտեսական երևոյթների վիթխարի կարևորութիւնը հասարակական կեանքում, չի կարող լիովին հասկանալ նրա էվօլյուցիան: Բայց կրկնում ենք, միւս կողմից, պակաս վտանգաւոր անգիտութիւն չէր լինի, եթէ բացառապէս կանգ առնէին թագնւած շարժառիթների վրա, բոլորը բացատրէին անտեսական պատճառների ուղղակի ազդեցութեամբ, ստորացնէին զաւգափարները, զգացումների, քաղաքական, բարոյական և կրօնական գործունէութեանց ազդեցութիւնը երևոյթների ընթացքի վրա:

Մի քանիսը, ինչպէս պ. Կօրնելիսսէն, Մարքսի էլ, Բակունինի էլ աշակերտը, լսել անգամ չեն ուզում քաղաքական գործունէութեան մասին, ու բոլոր իրենց յոյսերը դնում են քանուրդասակարգի հեղինակաւոր կադմակերպութեան վրա: Միւսները բարոյական գործունէութեանը վերաբերւում են բուն ատելութեամբ, այն պատրւակով, օր. թէ արբեցութիւնը և նրանից առաջացած հիւանդութիւնները ունեն անտեսական պատճառներ, նրանք յամառութեամբ հրաժարւում են ժամանակակից հասարակութեան մէջ որևէ միջոցի դիմել այդ չարիքը ոչնչա-

ցնելու համար: Ուրիշները, վերջապէս, եկեղեցու դէմ մղող կռուում ոյժերի խոտորումն են միայն գտնում ուղիղ նպատակից և յայտարարում են, թէ սօցիալական յեղափոխութիւնն է, որ կրօնական խնդիրը պիտի լուծի, ուստի և բոլորովին ապարդիւն և մինչև անգամ փնասակար է ներկայումս նրանով զբաղելը: Տեսական սխալ հիմքի վրա դրած բոլոր այդ զանազանակերպ հայեացքները, հետզհետէ աւելի նւազ ընդունելութիւն են գտնում բանւորների մէջ: Ամեն տեղ, մասնաւոր Անգլիայում բացառիկ արէդ-իւնի-օնիզմը դէպ իր անկումն է գնում: Բանւոր դասը տեսնելով այն օգուտները, որ բուրժուազիան հնձում է քաղաքական իշխանութիւնից՝ ձգտում է տիրանալ այդ իշխանութեանը: Միւս կողմից բարոյագիտական խնդիրները, որ առաջ անտես էին անում, այժմ սօցիալիստական վեհաժողովներում հերթական տեղ են տալիս: Բելգիայում, Զւիցերիայում, Աւստրիայում, շնորհիւ Օտտօ Լանգի կամ Վիկտոր Ադլէրի նման մարքսիստների, սօցիալական պրօպագանդան արբեցութեան դէմ այլ ևս դատարկ հնչիւն չէ, ոչ էլ պլատոնական ցնորք: Եւ եթէ մեզ մասնացոյց են լինում այն հեգնանքը, որով գերմանացի ընկերներն են վերաբերում այդ խնդրին, ապա կասեմ ես, որ նոյնպիսի ներողամիտ ծաղրանքի հանդիպում էր երբեմն և մեր սօցիալիստական ընկերակցութիւնների շահաւէտութեան պրօպագանդան:

Ինչ վերաբերում է կրօնական խնդրին, բաւական է մի փոքրիկ հայեացք ձգել ժամանակակից Եւրոպայի քաղաքական դրութեան վրա, համոզելու

համար, թէ ինչպէս բանւորական կուսակցութիւնների մեծագոյն մասը հակած է աւելի շուտ չափազանցնելու, քան պակասացնելու այն կուլի կարեւոր նշանակութիւնը, որ ճակատ առ ճակատ մղում է կղերականութեան դէմ: Գիտակցող սօցիալիստները մեղանշած կլինէին իրենց ամենատարրական պարտականութիւնների առաջ, եթէ շարունակ հիմնական սկզբունքները նկատի ունենալով, եռանդով չաշխատէին բանւորութիւնը դասակարգային կուլի հողի վրա պահպանելու: Դրանով բացատրւում է գերմանական սօցիալ-դեմոկրատիայի յայտարարութիւնը Էրֆուրտի վեհաժողովում. կրօնը—մասնաւոր գործ է: Դա նշանակում է, որ սօցիալիստները, որպէս քաղաքական կուսակցութիւն, դիմում են բոլոր բանւորներին և նրանց կուլի կանչում կապիտալիզմի դէմ, առանց քննելու նրանց փիլիսոփայական և կրօնական հայեացքները: Դա նշանակում է նոյնպէս, որ մի հասարակութեան մէջ, ուր դաւանանքների անտափօնիզմը արտացոլացնում է շահերի անտափօնիզմ՝ եկեղեցու բաժանումը պետութիւնից, հասարակական ամեն գործունէութեան գրաւումը հանդիսանում է ամենի համար միակ փրկարար որոշումը: Նոյն մըտքով ու նոյն չափով մենք լիովին ընդունում ենք Էրֆուրտի բանաձևը, այդ բանաձևն իսկապէս նշանակում է խղճի ազատութիւնը և աշխարհական իշխանութեան անկախութիւնը: Բայց պէտք է խոստովանել, որ այդ բանաձևը մի խոշոր անյարմարութիւն ունի, և այդ այն է, որ ընթերցողին երկմտութեան մէջ է ձգում ու թիւրիմացութիւններով լի է:

Այդ բանաձևը կարելի է հասկանալ, և կան ընթերցողներ, որ իրօք այդպէս էլ հասկանում են, իբր նա՝ սօցիալիզմը սահմանափակում է քաղաքական և տնտեսական հարցերով. «զբաղւենք երկրով, երկինքը հրեշտակներին ու ճնճղուկներին թողնենք»։ Այդպէս ասողները չեն հասկանում, թէ որպիսի խորին փոխազդեցութիւն է ցոյց տալիս կրօնական բնագոյնութիւնը սօցիալական ֆիզիքայի վրա։ Կրօնը—միաժամանակ և՛ տիեզերագիտութիւն է, և՛ սօցիօլօգիա. օրինակ, կաթոլիկութիւնը աշխարհը բացատրելով չբաւականանալով՝ զբաղւում է ոչ միայն հաւատով, այլ և իրաւունքներով։ Յանուն այն բացումի, թէ հարուստների մեծամասնութիւնը արդէն չի հաւատում, կաթոլիկութիւնը պատւիրում է հասարակական բարոյականութիւնն ընդունել, որի կանոնները վճռականօրէն հակասում են աղքատների երկրային շահերին։ Երբ աղքատները կհասկանան, թէ հարուստներն այլևս դադարել են հաւատաւուց, որովհետև դանքանց համար գիտականօրէն անկարելի է, և, որ նրանք թագցնում են իրենց անհաւատութիւնը, որովհետև նրանց ձեռնտու է ուրիշների հաւատը՝ այն ժամանակ կաթոլիկութեան ժամը կխափէ։ Եւ որպէսզի հին դաւանանքների խորտակումը վճռական լինի, հարկ է, որ սօցիալիզմն առօրեայ հոգսերից վեր բարձրանայ, հարկ է, որ եկեղեցու ամբողջական աշխարհայեացքին հակադրւի իրաւունքի, բարքերի, հասարակութեան, աշխարհի, ոչ պակաս ամբողջական հասկացողութիւնը։ Որպէսզի այդպիսի գործը փառաւոր վաղձան սենենայ, պէտք է բոլոր ոյժով ամրակուել

մտածողների և բանւորների այն շահաւէտ դաշը, որի մասին Մարքսը 44 թ. «Յրանս-Պրուսական Աննալներին» մէջ գրում էր. «Ազատական շարժումն իբրև գլուխ ունի փիլիսոփայութիւնը, իբրև սիրտ՝ բանւորութիւնը։ Փիլիսոփայութեան իդեալը չի կարող իրականանալ առանց բանւորութեան բարձրանալուն. բանւորութիւնը չի կարող բարձրանալ առանց փիլիսոփայութեան իդեալն իրագործելու։ Բայց երբ այդ մոմենտի բոլոր ներքին պայմանները վերջապէս պատրաստ կլինեն, այն ժամանակ մենք կլսենք թէ ինչպէս Գալիլայի աքաղաղի երգը կաւետէ Գերմանիայի վերածնութիւնը»։

Երկար, շատ երկար ժամանակ հարկաւորեց, քան Մարքսն էր կարծում, որպէսզի նրա ենթադրութիւններն սկսէին իրականանալ։

XIX դարը միաժամանակ և բանւորների դար էր և ուսումնականների։ Սակայն մինչև վերջին տարիներս էլ, գիտութիւնն ու ռամկավարութիւնը, իւրաքանչիւրն առանձին, ձգտում էին միեւնոյն նպատակին այն գետերի նման, որոնք հոսում են առանց խառնւելու։ Այսուհետև այդ ձուլումը կատարւել է կամ կատարւելու նախօրէին է։ Այնպիսի հիմնարկութիւններ, որպէս են նոր համալսարանը, ժողովրդական համալսարանները, ժողովրդական մասսաների մէջ բարձրագոյն կրթութեան տարածումը՝ դիւրացնում են այդ մերձաւորութիւնը։ Գիտութեան մարդիկ մտնում են ժողովրդի մէջ։ Ժողովուրդը գնում է գիտունի մօտ։ Փոխադարձ անվստահութիւնը վերանում է, նախապաշարումները չքւում են. տեսականը

և գործնականը հաշտում են: XX դարի արշալոյսին Գալլիայի աքաղաղն սկսում է երգել. Հոենսոսի միւս ափից բարձրանում են բանւորները և ի լուր ամբողջ աշխարհի միլիոնաւոր ձայներ կրկնում են.

«Բանւորներ բոլոր երկրների, միացէք»:

* *

«Իդեալականութիւնը մարքսիզմի մէջ» Վանդերվելդի բեֆերատը, ինչպէս ասեց, գուրս եկաւ բելգիական «Le Peuple»-ում: Բելգիական բանւորական կուսակցութեան առաջնորդը գրանով երևան է գալիս ոչ այնքան իբրև մարքսիզմի ֆնկադաս, որքան նրան մեկնող ու լուսաբանող: Նա վերցնում է մարքսիզմի սովորական ֆորմուլները և միայն աշխատում է լրացնել աւելի լայն բովանդակութեամբ: Բոլոր ժամանակ նա զգուշաւոր մի քաղաքագէտ է, որ չի ցանկանում բացձակատ երևան գալ ընդհանուր ընդունելութիւն գտած ֆորմուլների դէմ և ամեն տեղ, ուր միայն փոքրիկ հնարաւորութիւն է գտնում՝ դերադասում է պահպանել հին տիկերը և միայն նըրանց մէջ նոր գինի լցնել: Նա սփռում է շատ մեղմ, սակայն նրա փռածքը, ի հարկէ, բաւական կոշտ պիտի լինի շատ և շատ ուղղափառ մարքսիստների դժգոհատիք քնի համար: Եւ գուր չէ, որ Վանդերվելդի բոլոր ջանքերը՝ ջնջելու իր հակասութիւնների սուր անկիւնները, որոնց մէջ նրա հայեացքները երբեմն ընկնում են մարքսիզմի վարդապետութեան նկատմամբ, նրան չփրկեցին պ. Պլեխանովի վճռական յայտարարումից, թէ միայն սխալմամբ է, որ նրա երկերի ուս. հրատարակիչները Վանդերվելդին մարք-

սիստ են համարում, և որ իրօք «նա երբեք մարքսիստ չէ եղել»:

Եւ սակայն, մարքսիզմը — ոչ տնտեսական դժուարինի մտքով, այլ սօցիալական փիլիսոփայութեան մտքով — արդէն իր ձևափոխութեան ճանապարհին է: Ի հարկէ, նրա ճանապարհի նախնական տարածութիւնները նոյնն են, ինչ առհասարակ ամեն վերամշակութեան ենթակայ տեսութեան: Ամենից առաջ աշխատում են փրկել վարդապետութեան հիմնական, կենտրոնական ֆորմուլը, ընդլայնելով նրա միտքը, յարակցելով բոլոր հնարաւոր վերապահումները և մինչև անգամ վերապահումների վերապահումները: Այդ ուղիով Վանդերվելդի համար աւելի հեշտ էր դնալ, որովհետեւ գործի սկիզբն արդէն դրած էր մինչև նա, և այն այնպիսի հեղինակաւոր մարդու կողմից, որպիսին է մարքսիզմի հոգեւոր հայրերից մէկը — հանգուցեալ Ֆր. էնգելսը: Տնտեսական մատերիալիզմի մասին գրած նրա վերջին նամակները, որոնք մօտեւս նորից ժողովեցին «Dokumente des Sozialismus»-ի № 14—15-ում, ներկայացնում են տնտեսական մատերիալիզմի զանազան դրութիւնները «արծարծող խորհրդածութիւնների» առատ փորձեր և բողոքներ, մատերիալիստական մեթօդն ի շարը դործադրելու դէմ: Վանդերվելդն այդ նամակներն առաջ բերելով, դժբաղդաբար բաց է թողել և մի, վերին աստիճանի բնորոշ, խոստովանք. «Մարքսը և ես ենք մասամբ մեղաւոր, որ աւելի երիտասարդ խաւը տնտեսական կողմը շատ աւելի ծանրակշիւ է համարում, քան որ պէտք է»:



Պատմութեան ժառանգութեան հասկացողութեան առաջին հիմնական «առարկութիւնը» կայանում է նրանում, որ սօցիալական կեանքում «տնտեսութեան» առաջնութիւնը չի ժխտում իրաւունքի, քաղաքականութեան և ամեն կարգի «իդեօլոգիայի» փոխազդեցութիւնը տնտեսութեան վրա: Միայն «վերջի վերջոյ» մենք հանգում ենք տնտեսութեան, որպէս պատմութեան ամենատարրական և նախնական հիմքի, այն հէնքով (կանվա), որի վրա ժամանակի և տեղի բազմակողմանի ու կտրուկ պայմանները ազդեցութեամբ են այս կամ այն նկարը: Այդ «նկարներն» են, գէպքերի այդ գեղեցկադիտակն է, որ նախատում է ներկայ տնտեսութիւնը, այդ տնտեսութիւնն ինքը, ընդհակառակը, երբէք էլ նրանց կարիքը չունի իր գոյութիւնը պահպանելու համար: Յայտնի սահմաններում միայն նա կրում է փոփոխութիւններ այն ազդեցութիւններից, որ գալիս են նրանցից:

Մենք լիովին համաձայն ենք, որ այս բերւած նկատողութիւնը կամ առարկութիւնը միանգամայն համակերպելի է «տնտեսական մատերիալիզմի» հիմնական մտքի հետ: Երևոյթների աւելի ընդհանուր և տարրական խումբը կարող է տեղի տալ աւելի բարդ և արգելնաւոր երևոյթների առաջ, որոնց կեցութիւնը կանգնողաձեւի և «սկզբնական» խմբի վրա. սակայն այդ չի նշանակում, թէ վերջինը աւելի քիչ է ընդհանուր, տարրական ու առաջնակարգ: Բայց «տնտեսական մատերիալիզմի» կողմնակիցներն այդ միտքն ամուր բռնելով, իրենք իրենց զրկում են սիշարք փաստերից, որոնցով մինչև հիմա օգտւում էին:

Իսկապէս, պատմութեան գիտական ռեալական հասկացողութեան պահանջը խիստ մեծ է այս մեր դրական և քննական դարում: Բայց տնտեսական — մատերիալիստական ուղղութիւնը նեղ ու անտրամաբանական է թւում հէնց գիտական, քննական բէալիզմի աւելի վճռական կողմնակիցների համար:

Ամենից առաջ նրանք պնդում են, թէ տնտեսութիւնը «վերջի վերջոյ» երբէք չէ կարող պատմական հասկացողութեան սկզբնակէտը համարւել. ընդհակառակը, «տնտեսութիւնը» ինչ որ, նոյնքան «արգասաւոր» մի բան է, ինչպէս և իրաւունքը, քաղաքականութիւնը, իդեօլոգիան: Պատմութեան բէալական հասկացողութիւնը իր վերլուծութեան մէջ պէտք է աւելի հեռու գնայ և առարկան ընդգրկէ աւելի լայն մտքով: Բնական, աշխարհագրական, կլիմայական և հողային միջավայր — ահա պատմական զարգացման շատ աւելի առաջնական անկողմնակալ պայման. մարդս, որպէս կենսաբանական և մարդաբանական տիպար, աճելու և իր պահանջներն աճեցնելու ձրգտումով — ահա պատմական զարգացման առաւել ևս առաջնական անձնակում պայման: Մենք պարտաւոր ենք սկզբնակէտ ընդունել դրանց. այդ անձնական (սիւբեկտիւ) և անկողմնակալ (օբեկտիւ) պարագաների փոխազդեցութիւնը մեզ բանալի կտայ այս ինչ երկրի, կամ այս ինչ ժողովրդի թէ տնտեսագիտական, թէ գաղափարա-հոգեբանական, թէ քաղաքա-իրաւագիտական զարգացումը հասկանալու. մանաւանդ, որ դրանք — տարբեր ինքնուրոյն պրօցեսներ չեն — իրաւական, տնտեսական և բանական, — այլ սօցիալա-

կան զարգացման միակ պրօցեսի լոկ տարբեր կողմերը:

Տնտեսական մատերիալիզմի կողմնակիցները չեն բացասում, ի հարկէ, բնական միջավայրի ազդեցութիւնը: Բայց, — ասում են նրանք, — կլիման, հողը և այլն սօցիալական զարգացման անփոփոխելի պայմաններն են. և եթէ դրանք՝ անփոփոխելի ու մշտական պայմաններ են, հապա ինչպէս կարելի է դրանցով բացատրել մարդկանց սօցիալական կենցաղավարութեան փոփոխութիւնները:

Այդպիսի ընդհանուր ձևով արած առարկութիւնը, սակայն, ուղիղ չէ: Նա պարունակում է իր մէջ ճշմարտութեան մի մասնիկ, ուրիշ ոչինչ:

Ի հարկէ, որևէ ժամանակի սահմանափակ շրջանի համար կլիման, հողը etc. կարող են ընդունել իբրև անփոփոխ հանգամանքներ: Պարզ է, որ պատմական փոփոխութեան այդ կարճ շրջանում տեղի ունեցած երևոյթների անմիջական պատճառները պէտք է որոնել ոչ թէ կլիմայի կամ հողի փոփոխման մէջ, այլ մի ուրիշ բանում: Բայց ախր տնտեսական մատերիալիզմի կողմնակիցների սեփական խոստովանութեամբ «անմիջական» պատճառներ կարող են լինել ոչ միայն որևէ տեղի կամ ժամանակի տնտեսական պայմանները, այլ՝ և իրաւական, և մտաւոր, և կրօնական, և քաղաքական, և միջազգային, և գոտ-պատմական պայմանները: Ինչի՞ մասին է խօսքը. անմիջական թէ «վերջ ի վերջոյ» գործող պատճառների: Եւ մի՞թէ «վերջ ի վերջոյ» մենք միշտ էլ չենք հասնի, ի միջի այլոց, բնական միջավայրին, երկրի բնութեանը: Մի՞թէ լայնութեան և երկարու-

թեան աստիճանների զանազանութիւնը իրենով չի որոշել քաղաքակրթութեան ժամանակն այս, և ոչ ուրիշ տեղ: Մի՞թէ եզերային գծերի, լեռնային շղթաների կամ գետերի ձևաւորութիւնը չի սահմանել միջազգային հաղորդակցութեան բնաւորութիւնը: Մի՞թէ գետնի միջի մետաղների, հանքերի և սևահողի քանակութիւնը չի ներգործել և շարունակ չի ներգործում աշխատանքի միջազգային բաժանման վրա: Մի՞թէ «բնական միջավայրը» շարունակ իր նորանոր յատկութիւններով մուտք չի գործում մարդու տեսողութեան և գործունէութեան ասպարէզը: Ի հարկէ, այդ բոլորը կատարւում է այն չափով, ինչ չափով մարդկային խելքը թափանցում է բնութեան գաղտնիքների մէջ, բայց բնութեան գաղտնիքների այդ ներս թափանցելու միւկնոյն աստիճանը այլ և այլ տեղերում միատեսակ հետևանքներ չէ ունենում: Անգլիայի քարածուխի հսկայական շերտերը իրենց պատմական ազդեցութիւնը ունեցան միայն արդիւնաբերութեան փարթամ շրջանում, մինչ այդ ժամանակ այդ գործօնը կարծես գոյութիւն չունէր, նրա դերը մոռացութեան էր տրւած:

Եւ յետոյ, մի՞թէ պատմաբանի հայեացքը սահմանափակւած է ժամանակի կարճատև շրջաններով: Ոչ. պատմաբանը պարտաւոր է կառուցանել քաղաքակրթութեան պատմութեան մի ամբողջ փիլիսոփայութիւն, պարտաւոր է ամբողջ մարդկութեան զարգացման ընդհանուր պատկերը դժագրել: Ժամանակի փոքր շրջանների համար մենք «բնական միջավայրը», առանց քիչ թէ շատ աչքի ընկնող սխալի, կարողա-

ցանք ընդունել որպէս անփոփոխ պայման: Բայց եթէ ժամանակի իւրաքանչիւր առանձին շրջանի համար մենք իրաւունք էլ ունենայինք այդպէս վարելու, այնուամենայնիւ, այդպէս վարել նրանց բոլորի համար ի միասին վերցրած՝ կնշանակէր անագին սխալի մէջ ընկնել: «Ինչպէք տիրական մատերիալիստի» համար աւելի ևս այդ աններելի կլինէր, չէ՞ որ նրա համար «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխւում է»: Երկրագնդի և երկրաբանական գործակալները իրենց գործը չեն ընդհատել և չեն ընդհատում: Միասնական ասփերին, ճահիճներում, մեր աչքի առաջ ոչնչացւած ու ոչնչացւող անտառները քարէ ածուխի, գորշ ածուխի և անթրացիտի են փոխւում,—ու երբեք մեր արդիւնաբերութիւնը ուժեղ զարկ կստանայ նրանց մշակումից: Նոյն երևոյթը նկատւում է Բրետանի ծովածածկ անտառների մէջ: Կօրալեան պօլիպները, այդ «ապագայ աշխարհամասեր ստեղծողները» մեր օրերում ստեղծում են աշխարհամաս Աւստրալիայի և Նոր Գվինիայի մէջ: Զալլա Դարվինի հետազոտութիւնները ցոյց տւին, թէ ինչպէս կանոնաւոր ու մեծ ջանքերով մշակել ու շարունակում են մշակել գետինը ապագայ բուսականութեան համար բիրտ մարմինները: Մինչև այսօր Սքանդինավիայի և Ուէլսի ծովի մակերևոյթից բարձրանալու շրջանը դեռ շարունակւում է: Բաղաքակրթութեան պատմաբանը չի կարող անտես անել այն փաստը, թէ երկրաբանական և երկրագնդի էվոլյուցիան—որ այժմ էլ շարունակւում է—պայմանաւորել է մարդկային ցեղերի կլիմայական և աշխարհագրական դասաւորու-

թիւնը, մարդկութեան կեանքի մարդաբանական ամենաընդհանուր գծերը և, մասամբ էլ, նրա պատմութիւնը: Եւ զարմանալի չէ. մեր քաղաքակրթութեան բաղդն ամբողջովին սերտ կապւած է մեր մոլորակի բաղդի, նրա զարգացման և նրա հնարաւոր—հեռու ապագայում—անկման ու մահւան հետ:

Եւ, նկատեցէք այն փաստը, որ մարդու իրեն գործունէութիւնը ուժեղ կերպով ազդում է կլիմայի և հողի վրա. որ, օրինակ, անտառներ կտորելը, ճահիճներ չորացնելը, գետեր բարակացնելը, սերտ կապւած են իրար հետ, ազդում են կլիմայի վրա, ջրանցքները լրացնում և ուժեղացնում են գիւտերի նշանակութիւնը և այլն.—բոլոր այդ փաստերը վկայում են միայն, որ երևոյթների արդիւնաւոր, երկրորդական համախմբերը կարող են հակադարձ ներգործութիւն ունենալ առաջնակարգ, հիմնական երևոյթների վրա. բայց այդ երբէք չի փաստւում սրա առաջնութեանը կամ նրա արդիւնաւորութեանը: Չէ՞ այդպէս են ուսուցանում իրենք «տնտեսական մատերիալիզմի» կողմնակիցները:

«Մարդկութեան պատմութիւնը—իրաւացի նկատում է Զիմմելը—մի փակւած դուխ չէ, որի լոկ ոկիզբն ու վերջն են ենթարկւում աշխարհային ոյժերի ազդեցութեանց ու նրանց միշտ կցորդ հանդիսանում. նա զարգանում է այդ ոյժերին զուգընթաց ներհոսման (էնդօսմոս) և արտահոսման (էքզօսմոս) տեղական ճանապարհով»: Իսկ այդ կացութիւնը յագեցած է հետեանքներով:

Այստեղից հետևում է, որ սօցիալական և, մաս-

նաւորապէս, տնտեսական զարգացումը միայն իր «ներքին-ինքնայատուկ, իմամեննա օրէնքներէից» չէ կախած. որ սխալ է, իբր նա միայն «ինքն իրենից է զարգացնում» այն տարրերը, որոնք «գիւլիքտի-քաբար բարեփոխում են» նրա պարունակութիւնը: Ոչ: Նոյն Ձիմմելի խօսքերով ասելով,—որպէս անհատի ներսը հոգեկան երեւոյթները պատճառական մի անշարժ շղթայ չեն կազմում, որովհետեւ արտաքուստ եկող տպաւորութիւնները բաժանում են նրանց կապը և հոգեկան կեանքի նոր տարրեր մտցնում, որ նախընթաց հոգեկան կացութեամբ անկարելի է հաշ-ւել—նոյնպէս և չի կարելի մարդկային կեանքը հա-մարել ինքն իրեն գոյութիւն ունեցող մի զարգա-ցում, որի աւելի նախնական շրջանները իրենց մէջ պարունակում էին այն բոլոր սաղմերը, որոնցից գուտ ներքին պատճառական շղթայով հետզհետէ զարգանում է այն բոլորն, ինչ համեմատաբար աւելի ուշ է գալիս»...

* *

Այժմ դառնանք սօցիալական զարգացման միւս առաջնական—սիւբեկտիւ պայմանին՝ մարդուն իրեն:

Մարդը—երբէք էլ tabula rasa չէ, որի վրա արտաքին, օբեկտիւ պայմանները և ոյժերը կարողանային զրել բոլորն, ինչ քէֆները տար: Մարդն ինքը բնութեան մի բարդ ոյժն է, ինքն արդէն ներ-կայացնում է բնութեան տարրական ոյժերի բար-ձրագոյն և բարդացած կօմբինացիաներից մէկը. որպէս ամեն ոյժ, նա էլ իր ինքնուրոյնութեան ներ-քին որոշ օրէնքներն ունի, արտայայտում է գործու-

նեայ ձգտումների որոշ հաւաքականութիւն: Մարդը արդիւնք է պատմութեան բազմադարեայ զարգացման. հարիւրաւոր դարեր կուտակել են նրանում զօրավիգ եռանդի յայտնի քանակութիւն, առանձին ձեռով, այդ եռանդի, այսինքն արտաքին միջավայրի դէմ այդ րէակցիայի կիրառութեան առանձին օրէնքներով:

Վերցնենք այդ կենդանի ոյժի ամենատարրական ձգտումներից մէկը. բազմանալու ձգտումը: Այդ ոյժին իբրեւ զօրաւոր հետեանք, հանդիսանում է բնակչութեան աճումը: Իսկ բնակչութեան աճումը ահագին նշանակութիւն ունի, որպէս քաղաքակր-թութեան առաջ մղող ոյժ: Դա, կարելի է ասել, մի թթիւմոր է, որ ընդունակ է թթեցնել ամեն քա-ղաքակրթութիւն: Նորագոյն ժամանակներումս այդ գործօնի նշանակութիւնը մի առանձին թափով առաջ է քաշել Մ. Մ. Կօվալեօվսկին: Ի՞նչ բան է ինքը տնտեսագիտութիւնը, ի՞նչ է տեխնիկայի և արդիւ-նաբերութեան ձևերի զարգացումը, եթէ ոչ ազգա-բնակչութեան և նրա ապրելու միջոցների քանակու-թիւների խանգարած հաւասարակշռութեան ար-դիւնքը: Տեխնիկայի զարգացումը եթէ չի գնում բնակչութեան զարգացման հետ, սկսում է մտքերի յուզմունք, սկսում է գաղթական շարժում,—կամ հատ-հատ, ինչպէս ժամանակակից տեղափոխութիւն-ներն են, կամ մեծ քանակութեամբ, ինչպէս օր. պատմութիւնից յայտնի «ազգերի մեծ գաղթակա-նութիւնը»:

Ի՞նչ կարող են առարկել զրա դէմ տնտեսական մատերիալիզմի կողմնակիցները: Ի հարկէ, նրանք



կարող են ասել և ասում են, որ կայացող ամուսնութիւնների թւի, հետեապէս և բնակչութեան աճումի վրա ազդում են և ցանքսը, և հացի դինը, և այլն և այլն, որ բնակչութեան աճումը հէնց որոշւում է տնտեսական պայմաններով. որ բազմաւառ ձգտումը ջլատում է սեռական բնազդի այնպիսի հրէշաւոր այլանդակութիւններով, ինչպէս անառակութիւնն է, Zweikindersystem և այլն: Սակայն, իրենք իրենց առարկութիւնը զրկել են հարկաւոր արժէքից, միանգամից խոստովանելով, որ երկրորդական, արդիւնաւոր երևոյթները կարող են, այն էլ շատ ուժեղ ազդեցութիւն ունենալ առաջնականի վրա: Յամենայն դէպս, ազգաբնակչութեան աճումը և այդ աճման անսպառ ձգտումը, որ առաջ է եկել կենսաբանական զարգացումով, առաւել նախնական է, քան հասարակական արդիւնաբերութեան ձեերը: Այդ ձգտումի արտայայտութիւնները, իրենց հերթին, կարող են ձևափոխւել, մինչև անգամ ջլատւել երբեմն-երբեմն, արդիւնաբերութեան եղանակների, տեղի հարստութեան կարգաւորման և այլն ազդեցութիւններից, բայց այդ բոլորը յայտնի սահմաններում միայն: Եւ ազգաբնակչութեան աճման ձրգտումը շարունակում է ծանրանալ ժամանակակից հասարակական կարգերի վրա, արգելքների հանդիպել, մի շատ հիւանդոտ երևոյթներ ծագեցնել, յուզմունք ու դժգոհութիւն առաջացնել,— և այդ մինչև այն ժամանակ, քանի չեն գտնւի այնպիսի տեսնիքական կամ սօցիալական պայմաններ, որոնք կարող լինեն

բարձրացնել երկրի տոկոսնութիւնը ազգաբնակչութեան նկատմամբ:

Ինչ որ ճշմարիտ է անհատների բազմաւառ տեսակէտից, ճշմարիտ է և անհատի պահանջների բազմաւառ տեսակէտից: Զարգացման կենսաբանական օրէնքները հիմնել են որոշ իշխանաւորութիւն, որոշ աստիճանաւորութիւն պահանջների շատաւառ մէջ, որով յայտնի աւելի տարրական պահանջի պարզ բաւարարութիւնն իր ետևից անընկճելի ոյժով քաշում է հետևեալ, աւելի բարդ պահանջ: Ի հարկէ, այդ գործողութիւնն իրականութեան մէջ նոյնպիսի ուղիղ, շիտակ ու բնական ճանապարհով չի կատարւում, նրան աղաւաղում են մի ամբողջ շարք հիւանդաբանական երևոյթներ: Բայց և ոչ մի ոյժ, ոչ մի ձգտում բնութեան մէջ առանձնակի չի գործում, չի արտայայտւում ինքն իրեն, ազատ իւրաքանչիւր ձգտման գործողութիւնը վանւում, կերպարանափոխւում է, յաճախ փշրւում մի շարք կազմակերպւող ուրիշ ոյժերի, ձգտումների ու ազդեցութեանց ներկայութեամբ:

Ազգաբնակչութեան աճման հակումի ինքնուրոյն նշանակութիւնը չեն կարող հերքել մարքսիստներն և: Սեռական բնազդը, որ բովաժ է կեանքի կրուում, որպէս ցեղը պահպանելու մի ուժեղ միջոց, ստիպւած պէտք է, առնւազը, դնել «ստամոքսի ձայնի» կողքին: Այստեղից է ծագում հէնց Էնգելսի հոշակաւոր փորձը արդիւնաբերութեան ձեերի նախնական նշանակութեան մասին իր թէզիսի արծարծող բացատրութիւնը: Տեսնում էք, խօսքը, ընդհանրա-

պէս «անմիջական կեանք արտադրելու» մասին է, իսկ այդ հասկացողութիւնն իր մէջ ներփակում է և կեանքի համար միջոցներ արդիւնաբերելը և կեանքի իրենց «սիւքեկտները» արտադրութիւնը—ինչպէս արդիւնքների արտադրութիւն, նոյնպէս և «երեխայ արտադրութիւնը»: ...Այսպիսի գոտ քառախաղական միջոցներով մարդիկ սկսում են ընդլայնել ուսմունքի առաջուց տւած խիստ սահմանափակ բանաձևերը...

Քանի մեր ուշադրութիւնը դարձնում ենք պատմական ընթացքի հիմնական սիւքեկտիւ տարրի վրա—մարդու իրեն վրա,—ստիպւած ենք լինում գործ ունենալ ոչ միայն մարդու, որպէս homo sapiens, հոգեկան, մտաւոր, յոյսերի ու կամքի կազմութեան ընդհանուր օրէնքների հետ, այլ և պատրաստի ցեղերի հետ, որոնց մենք կազմակերպւած հանդիպում ենք ղեռ պատմութեան վաղ արշալոյսին: Եւ ցեղային մոմենտը, ի հարկէ, մարքսիստները չեն հերքում. բայց այն եղանակը, որով նա մտցրւում է տնտեսական մատերիալիզմի ղօգմայի մէջ՝ ուշագրաւ է իր անսովոր, շլացուցիչ պարզութեամբ. «Յեղն ինքը նոյնպէս ներկայացնում է տնտեսական գործոն», յայտարարում է Էնգելսը: Եւ գորդեան հանգույցը լուծւած է:

«Յեղը տնտեսական գործոն է»: Որ ցեղը գործոն է և տնտեսական երևոյթների վերաբերմամբ-դա անտարակուսելի է. և այդ մտքով, պէտք է ասել, մենք ևս համաձայն ենք այն «տնտեսական գործոն» ճանաչել: Բայց, որ ցեղը լինի գործոն տնտեսական

բնաւորութեամբ,—այդ Էնգելսը չէ ապացուցել և չէր կարող ապացուցել, քանի որ մարդկանց ցեղերի բաժանելը տեղի է ունեցել մարդկութեան կենդանաբանական գոյութեան այնպիսի հեռաւոր դարում, որի համար արդիւնաբերութեան ձևերի մասին խօսելը հասկացողութիւնների կոպիտ բռնաբարումն էլլինէր:

Սակայն, որպէսզի միանգամ ցուցադրած դօգմաների ձևական ճշմարտութիւնը պահպանել, Էնգելսը ակամայից ստիպւած էր թագնել անորոշ ու անվերջ առաձգական ձևակերպութիւնների ստւերի տակ և այնտեղ է հասել, որ «տնտեսագիտութեանը» տւել է հետևեալ զարմանալի «տարածիչ բացատրութիւնը». «Տնտեսական յարաբերութիւնների տակ պէտք է, բացի դրանից, հասկանալ այն տեղի աշխարհադրական դիրքը, որի վրա այդ յարաբերութիւնները զարգանում են. այստեղ, ի հարկէ, պէտք է հաշւել և այն միջավայրը, որ շրջապատում է յիշեալ հասարակական եղանակը»...

Նմանօրինակ «մեկնութիւնների» և «տարածիչ բացատրութիւնների» շնորհիւ, հռչակաւոր «տնտեսագիտութիւնը» և «արդիւնաբերող յարաբերութիւնները» փոխւում դառնում են հաւաքական անուն այն ամենի համար, ինչ կամենաք: Տնտեսական գործոնի «վերջնական գերիշխանութիւնը», ի հարկէ, դրանով ևս առաւել հաւանական է դառնում. թէև «տնտեսական գործոնից» մնում է մի խօսքից քիչ բան աւելի:

Այն սկզբնակէտերը, որոնց պատմական պրօցեսը բացատրելու ժամանակ մենք «վերջ ի վերջոյ» հաս-

նում ենք, չեն կարող լինել այնպիսի տարրեր, որոնք ստեղծագործւում են հէնց այդ պատմական պրօցեսի մէջ: Տնտեսագիտութիւնը, իրաւունքը, իդեօլօգիան՝ պատմութեան ծնունդն են, նրա որդիքը. նրանք պէտք է բացատրեն պատմութեան ընթացքով, և ոչ թէ պատմութեան ընթացքը պէտք է նրանցով բացատրուի: «Վերջ ի վերջոյ» — բացատրող սկզբունքներ պատմական պրօցեսի համար կարելի է միայն այն տարրերի մէջ որոնել, որոնք գոյութիւն ունեցել են նախ քան այդ պրօցեսը: Ուստի և բնական միջավայրը՝ որպէս օբեկտիւ գործօն, և մարդը՝ որպէս կենսաբանական որոշ տիպար, որ մարմնապէս կատարելագործւել է կեանքի նախապատմական կուում, — ահա սօցիօլօգի և պատմաբանի բնական սկզբնակէտերը: Բնական միջավայրի պայմանները և մարդկութեան որակական ու քանակական աճման փոխադարձ ներգործութիւն — ահա ինչին է «Վերջ ի վերջոյ» հանգում սօցիալական զարգացումը:

Այդ զարգացման աշխատանոցում, փոխներգործութեան այդ հողի վրա հիմնւում է «արւեստական միջավայրը» կամ քաղաքակրթութիւնը. դասաւորւում են քաղաքակրթական տարրեր տիպեր, մի կողմից, բնական միջավայրի ամփոփ առանձնայատկութիւններին կախած, միւս կողմից ժողովրդի կամ ազգի մարդաբանական, ցեղագրական տարբեր յատկանիշներին կախած: Տնտեսագիտութիւնը, իրաւունքը, պետական կազմը, կրօնը և ընդհանրապէս իդեօլօգիան — հաւասարապէս ածանցական են: Աւել են: Հասարակութեան տնտեսագիտութիւնը, իրաւունքը և

հոգեբանութիւնը չի կարելի մէկը միւսին հակադրել, մէկի մէջ միւսի «պատճառը» տեսնել: Չի կարելի, որովհետեւ դրա համար պէտք է նրանց իրարից անջատելնք, նախօրօք մէկուսացնելնք: Բայց հէնց այդ է, որ անկարելի է: Տնտեսագիտական զարգացումը առանձին պրօցես չէ, որ կատարւում է իրաւագիտականի կամ բանականի հետ զուգընթաց: Ընդհակառակը, այդ բոլորը մի պրօցեսի զանազան կողմերն են միայն. նրանց իրարից կարելի է զատել միայն վերացական, երևակայական կերպով: Իրօք, տնտեսական ամեն յարաբերութիւն իր մէջ պարունակում է և իրաւական և հոգեբանական յարաբերութիւն: Ուրիշ խօսքով ասած, «տնտեսական յարաբերութիւն» մենք ունենք այն չափով, որ չափով այդ բոլորն որոշ նպատակի համար մենք ուսումնասիրում ենք յայտնի սօցիալական յարաբերութեան բացառապէս իր նիւթական տնտեսական կողմից: Դա պրօցեսների տարբերութիւնը չէ, հայեցակէտերի տարբերութիւնն է, որոնցով քննւում է միևնոյն պրօցեսը: Նայենք հասարակութեանը անկողմնակալ — նիւթական տեսակէտից — մենք ունենք հասարակական տնտեսութիւն, տեխնիկա, արդիւնաբերութիւն և նիւթական բարիքների շրջանառութիւն. նայենք կազմի տեսակէտից — ունենք այն իրաւական կարգերը, այն իրաւաբանական նորմաներ, որոնցով կառավարւում են, որոնց շրջանակներում ընթանում է հասարակութեան ամբողջ իրականութիւնը. նայենք սիւբեկտիւ տեսակէտից — մենք ունենք դէպքերի հոգեքանական և քաղաքական ուսաստառ, հասարակա-

կան բարոյականութիւն, բարբեր, դաւանանքներ, փորձեր, այսպէս կոչուած «իդեօլոգիաներում» երեւոյթներին գիտակցական բացատրութիւն տալ: Այդ, այսպէս ասած, սօցիալական զարգացման երեք կարգի չափումն է,— ուրիշ ոչինչ: Այդպէս ուրեմն, պատմութեան ընթացիկ հասկացողութիւնը աւելի շատ է մօնիստական, քան տնտեսա—մատերիալիստականը: Վերջինս պարտաւոր է խզել իրարից տնտեսագիտութիւնը և իրաւունքը, տնտեսագիտութիւնը և իդեօլոգիան, որպէսզի յետոյ մէկը դուրս բերի միւսից: Իր մեթոդի դոգմատիք բնաւորութեան շնորհիւ, տրնտեսական մատերիալիստը չի տեսնում այն արմատական սխալը, որ ծածկւած է հէնց այդ առաջին քայլում: Տնտեսական—իմացական քննադատութիւնը մերկացնում է այդ սխալը, բանում է սօցիալական կեանքի առանձին կողմերն իրարից զատելու վերացականութիւնը և թոյլ չի տալիս, որ այդ կողմերը ինքնուրոյն գործօններ կամ էութիւններ դարձնէք, անկախ պրօցեսներ, որոնց կարելի լինէր որպէս մէկը միւսի պատճառ ու հետեանք դիտել: Ոչ, դրանք միայն առանձին կողմերն են, որ փոխադարձաբար համապատասխանում են իրար, որովհետեւ պատկանում են միևնոյն պրօցեսին, նոյնքան ամբողջական, որքան այդ պրօցեսի ամբողջական ու հենդանի աւտօմները—մարդկային անհատները:

Բայց չի՞ կարելի արդեօք հարցնել, թէ որն է «աւելի առաջնակարգ». տնտեսագիտութիւնը, իրաւունքը թէ իդեօլոգիան: Ո՞րը որին է յաջորդում: Ոչ այս, ոչ այն, ոչ միւսը: Բոլոր երեքը—կամ, աւելի

աւ է ասել, այդ դարաշրջանը, երբ մենք դիտում ենք իրարից տարբերող իրաւունքը, տնտեսութիւնը և քաղաքականութիւնը—յաջորդում է այն դարաշրջանին, երբ այս էլ, այն էլ, միւսն էլ ներկայացնում են մասամբ շաղկապւած, ոչ-զուտ միացութիւն: Այդ միացութիւնը երևում է, օր. «սովորոյթների իրաւունքը» մէջ: Սովորոյթների իրաւունքը՝ մարդկանց միաժամանակ և իրական, աւանդաբար ժառանգած վարքն է, նրանց օրեկտիւ «կենցաղավարութիւնը», դա, միևնոյն ժամանակ, նրանց «սովորոյթն» է, նրանց բարբը, նրանց սովորութիւնը, իրաւունքի գիտակցութիւնը, դա, վերջապէս, միաժամանակ և նրանց իրաւաբանական անգիր նորման է: Աւելի ուշ միայն՝ այս, այն և միւսը երևան կդան աւելի պարզ, կտարբերւեն իրարից: Բայց այդ տարբերումը անշատում չէ, ոչ էլ մանրացում, այլ միակ ամբողջի բարդացումը միայն:

Ուրեմն, պատմութեան ընթացիկ տեսական հասկացողութիւնը իր մեթոդով հանդիսանում է քննադատական, իսկ բովանդակութեամբ—խոր մօնիստական: Եւ նրա մօնիզմը միակողմանի, միթեանի չէ: Այդ մօնիզմը սինթետիքական է և բազմակողմանի:

Նա հեռու է ամեն տեսակ մատերիալիստական բնագիտութիւնից, ինչպէս և տնտեսական մատերիալիզմից: Այդ վերջինի մէջ նա տանում է միայն այն լաւ կողմը, որ նա սօցիալական կեանքի նիւթական—տնտեսական կողմն ուսումնասիրելու խնդիրը ծրագրի առաջաւոր կէտը դարձրեց: Բոլորն, ինչ նա արել է այդպիսի ուսումնասիրութեան մտքով, զնա-

հատելի գանձ է գիտութեան մէջ, — թէև դրանով չի լրանում հասարակական կեանքի գիտութիւնը: Ընդհակառակը, այդ տեսակ ուսումնասիրութիւններով յաւիշտակելով հասարակական կեանքի միւս կողմերն անտես անելն ու ի վնաս նրանց գնալը ներկայացնում է բացասական երևոյթ, որի դէմ պէտք է կռիւ մղել:

Տնտեսական մատերիալիզմը հակառակ էր խիստ հասարակ դարձնել պատմութեան մէջ գաղափարական երևոյթների բացատրութիւնը: Գաղափարները նա դիտում էր ոչ իբրև դէպքերի էական տարր, այլ իբրև կողմնակի հիւանդոտ նշան: Այդ տեսակէտից նա ներկայացնում էր ուղիղ հակադարձութիւն իր տեսական նախորդին — ուտոպիզմին: Վերջինիս համար գաղափարները մի տեսակ ինքնագոհ էին և ամենակարող: Ժամանակակից գիտական ընթացիկ համար գաղափարները դէպքերի թոյլ ու տոգոյն ստւերները չեն, ոչ էլ նրանց ներառործած, ինքնաբաւական նախապատճառը: Գաղափարները մարդկութեան ուղեղում կուտակւած գորավիզ կորովի հեզբեանական արտայայտութիւնն են, մի առանձնակի, չափազանց կենդրոնացած ձևով: Գաղափարները իրականութեան անբաժան, անանջատ և միաժամանակ էական մասն են: Նրանք հաւասարազօր օղակներ են ընդհանուր պատճառական շղթայի. նրանք ունեն իրենց պատճառները, ունեն և իրենց գործողութիւնը դէպքերի ընդհանուր հոսանքում: Եւ պատմութեան ընթացիկ տական հասկացողութիւնն այստեղ առաւել մօնապական կլինի, քան մատերիալիստական: Վերջինս գա-

ղափարներն անջատել է իրերի ընթացքից և զննել է առաջինները, լուի իբրև ցուր, իբրև երկրորդի թոյլ անդրադարձ: Ինքնըստինքեան վերցրած բնական ընթացքի և նրա «իդեօլոգիաներում» արտացոլւած կրկնակի երկուութիւնը խիստ անիրաւացի է: Հէնց շնորհիւ այդ բանին, «գաղափարները» հասարակական պրօգրեսի կառքի ետևն էին նստեցրած: Բայց բանի դեռ կարծում էին, թէ այդ կառքը ինքն իրեն անսովոր արագութեամբ կսլանայ դէպի տարերային Zusammenbruch-ը վտանգն այնքան էլ սարսափելի չէր: Բայց հէնց որ երևաց, թէ իրերի տարերային ընթացքն աւելի մօտ է, քան կարծում էին և յիշեցնում է կրիային, այն ժամանակ գաղափարների տեղը «բնական պրօցեսի» ետևում, բնական ճանապարհով մարդկանց սկսեց բերել ծիծաղելի չափաւորութեան և ճշտապահութեան:

«Բանւոր դասակարգը ոչինչ իդեալ չպէտք է իրականացնէ, — ասում էր Մարքսը, — այլ միայն կործանւող բուրժուական հասարակութեան գրկում զարգացած նոր հասարակութեան տարրերը պէտք է ազատէ»: Այդ արհամարհանքը դէպի իդեալները, բանւոր դասակարգի խնդիրների «մատերիալիստաբար» այդ սղմած բանաձևը — այդ բոլորը հասկանալի, թէև ծայրահեղ ընթացիկ է ուտոպիզմի դէմ: Նա կարող է միաեւ ծայրահեղ յեղափոխականութեան հետ, եթէ մենք մտաբերենք, որ Մարքսը 40-ական թւերի վերջը հաւաքում էր այնպիսի մօտաւուտ յեղափոխութեան, որ ապագայ համաշխարհային ցուցահանդէսի ժամանակ հարուստներին նշա-

նակում էր միայն առաջնորդի համեստ դերը, որ դրած են իրենց անցեալ «սեփական» ապրանքների մօտ, որպէսզի ցուցահանդէսի հետաքրքիր այցելուներին ցոյց տան այդ ապրանքները և հարկաւոր բացատրութիւններն անեն: Բայց ժամանակներ անցան, բուրժուական հասարակութեան կենսունակութիւնը շատ աւելի անյադթելի երևաց, և Մարքսի վերը բերած հայեցակէտը հիմք ծառայեց Բերնշտէյնի թէզիսի համար. «Վերջնական նպատակը ոչինչ է, շարժումն — ամեն ինչ»: Սակայն սրպիսի խալ բնաւորութիւն ստացաւ այդ հայեցակէտը, յարմարցւած միանգամայն փոխած պայմաններին: «Quantum mutatus ab illo»!

Գաղափարը, գաղափարականութիւնը Մարքսի և Էնգելսի համար մի ժամանակ բոլորովին հոմանիշ էին ուտոպիայի, ուտոպիզմի հետ: Ակնյայտնի, ընդդէմ ձեռնա-ծաղրական վերաբերմունք իդեալական տարրին, և միեւնոյն ժամանակ աշխարհայեացքում թագնւած ամենալայն և համարձակ իդեալականութիւն, որով ներշնչւած է ամբողջ սիստեմը, — այդպէս էր հիմնական հակասութիւնը:

Բանը նրանում է, որ իդեալականութեան ժրխտումը Մարքսի մօտ զուտ գլխի, վերացական-փիլիսոփայական, գերագոյն — տնտեսական վերնաշէնըն էր, և ոչ թէ սիստեմի միջուկը: Դա զուտ փիլիսոփայական ընկալիչ էր բարոյական դաւանանքի դէմ: Դա կրկնութիւն էր — միայն մասնագիտական, բարոյագիտական աշխարհում — նոյն այն պրօցեսի, որ տեղի էր ունեցել և ընդհանուր-փիլիսոփայական աշ-

խարհում: Աւելի վաղ, փիլիսոփայութեան մէջ թագաւորում էր ասուածաբանական և բնագանցական դաւանաբանութիւնը: Փիլիսոփայական քննականութիւնը տարուբերեց այդ դաւանաբանութիւնը, բաց արեց մեր գիտելիքների յարաբերական լինելը, նրանց պայմանական բնաւորութիւնը, նրանց արմատները մարդկային զգացականութեան մէջ: Բայց հին պաշտամունքի ընկալիչայից քննադատականութիւնը փայտը նախ և առաջ հակառակ կողմը դարձրեց: Նա գիտութեան մէջ մտցրեց կատարեալ սկեպտիցիզմ, առաջացրեց ագնօստիցիզմ, այսինքն իրակատար անհաւատութիւն մեր հասկացողութիւնների անկողմնակալ գնահատութեան: Մարքսը և Էնգելսը բոլորովին այդպէս եկան և բարոյական սկիպտիցիզմին, թէ և ընդհանուր-փիլիսոփայական ասպարիզում անցել էին այդ սկեպտիկ շրջանի վրայով:

Ի՞նչ բան է բարոյականութիւնը: Մի՞թէ վայրենու և եւրոպացու, հին աշխարհի և միջին դարերի մարդու բարոյականութիւնը միատեսակ է: Մի՞թէ գինւորականի, վաճառականի, ագնւականի, գիւղացու, ֆաբրիկանտի և բանւորի պատւասիրութիւնն ու խիղճը տարբեր չեն այնպէս, ինչպէս տարբեր է նրանց սօցիալական դիրքը: Մի՞թէ կարող է խօսք լինել համամարդկային բարոյականութեան մասին: — Այդպէս է սկեպտիկի կամ ագնօստիկի փաստաբանութիւնը բարոյագիտութեան աշխարհում: Փիլիսոփայական սկեպտիցիզմի հետի նմանութիւնը ապշեցուցիչ է: Մեր գիտելիքները — ցնորք են, պատրանք, մեր հոգու խաբուսիկ խաղը — ասում է ագնօստիկը

փխրսովայութեան ասպարիզում: Բարոյագիտական հասկացողութիւնները ցնորք են, պարզ արտացոլումներ սօցիալական առանձնայատուկ դրութեան պատմական առանձնայատուկ դարաշրջանում: Տխմարներն այդ ցնորքներով խաբում են իրենց, իսկ խորամանկները՝ նրանցով խաբում են ուրիշներին. — ասում է սկեպտիկը բարոյագիտութեան ասպարիզում: Այստեղից հեռու չէ և մինչև Լաֆարգի այն «տարապայման հայեացքները», որոնց մասին յիշում է Վանդերվելդը, ասելով թէ. «Մեր ընկեր Պօլ Լաֆարգը, որ ամենից աւելի սիրում է վախեցնել երկշտաներին իր տարօրինակ ուսմունքի ծայրահեղութեամբ, մի անգամ չէ յայտարարում նրանց, թէ արդարութիւնը, ազատութիւնը, եղբայրութիւնը, պրօգրեսը — այդ բոլորը լոկ կուռքեր են, որոնց բուրժուազիան ձևակերպել է, որպէսզի քրիստոնէական աստուածը նշանակւի և ժողովուրդը ստրկութեան մէջ գտնուի»:

Այդ փաստաբանութիւնը սակայն քննադատութեան չի զիմանում: Ի հարկէ, բարոյականութեան մասին եղած հասկացողութիւնները փոփոխական են: Բայց միթէ փոփոխական չեն և մեր գիտական հասկացողութիւնները: Միթէ մարդկութեան մի շնչին մասը չէ միայն, որ իւրացրել է այն գիտական աշխարհայեացքը, որ մենք անսասան հիմքերի վրա հաստատւած ենք համարում: Մի վայրենու համար, որ հինգից աւելին անընդունակ է հաշուել, անվերջ մեծ քանակութիւնների հաշիւը առաւել անմիտ բանդազուշանք կլինէր, քան մեր բարոյագիտական հաս-

կացողութիւններն այն բուշմէնի համար, որ ասել է. «մեղքը նա է, երբ իմ կինս կյափշտակեն ինձնից. բարիքը նա, երբ ես կյափշտակեմ ուրիշի կինը»: Բարոյական գաղափարները վերին աստիճանի համակած են սիւբեկտիւիզմով, բայց արդեօք աւելի բարդագոյնը տեսական գիտութիւններից՝ սօցիօլօգիան և պատմութիւնը նոյն աստիճան չէ՞ն համակած նրանով: Կարելի՞ է արդեօք այդ հիման վրա բացասել համամարդկային տրամաբանութիւնը և համամարդկային գիտութիւնը: Գիտական ամենաբարձր հասկացողութիւնները, որպէս և բարոյագիտական բարձրագոյն պահանջները ցեղի և անհատի մէջ ենթադրում են յայտնի հասունութիւն, և այդպիսի հասունութիւն, այդպիսի մտաւորապէս ձեռներէց մարդկանց համար միայն իրենց արժէքն ունեն: Ընդհանուր մարդկային բարոյական տրամաբանութեան բաղդը նոյնքան քիչ է անյուսալի, որքան և ընդհանուր մարդկային սօցիալական գիտութեան վիճակը: Այս կամ միւս ասպարիզում մեր հասկացողութիւնները բացարձակ չեն. բայց այդ ոչ միայն արգելք չի լինում նրանց յաւիտենական, անպատրանք, իրական պրօգրեսին, այլ ընդհակառակը՝ այդպիսի մշտական պրօգրեսը հնարաւոր է դարձնում:

Իգեալը չի կարելի փոխարինել հասարակ նախատեսութեամբ: Նախատեսութիւնը մեզ կարող է ցոյց տալ յայտնի պրօգրեսի զարգացման վերջնական հետեւանքը միայն. սակայն վերջնական հետեւանքը վերջնական նպատակ չէ: Վերցնենք ամենապարզ և թրուռցիկ օրինակ: Մենք գիտենք, որ արևի տակ ո-

չինչ յաւիտենական չէ. յաւիտենական չէ և մեր մոլորակը: Կեանքն այդ մոլորակի վրա այժմ իր ծաղկման շրջանումն է. երբեք է կսկսւի հաւասարակշռութեան չեղոք շրջանը, որպէսզի յետոյ անկման շրջանը գայ: Բայց որքան էլ անտարակուսելի լինի վախճանական անկման շրջանը, նրան վերջնական նպատակ դարձնել մենք չենք կարող: Իդեալը մի շէնք է, որ իր մէջ միացնում է նախատեսութեան և գնահատութեան տարրերը: Ինչպէս գիտական նախատեսութիւնը հասունանում է լայտնի ըմբռնումների վերլուծութիւնից և միացական եղանակից (սինթէզ), այնպէս էլ գիտական գնահատութիւնը զարգանում է մարդկային հոգու յոյգերի վերլուծութեամբ և միացութեամբ: Բարոյագիտութիւնը, իդեալի բանաւոր կառուցւածքի և այդ իդեալի թելադրած վարքի սխտեմի մտքով, մարդու և յեղափոխականի աշխարհայեացքի անհրաժեշտ էական մասն է: Եւ միայն սօցիալիզմն է, որ դասակարգային առանձնայատկութիւններից բարձրանալով ու նպատակ դնելով ոչնչացնել նրանց, ազատել մարդկութեան այդ հակահասարակական պատւարներից, տանում է իր հետ իսկական համամարդկային բարոյագիտութիւնը:

Որ դասակարգային դրութիւնը արտայայտւում է բարոյագիտութեան հասկացողութիւնների համեմատ, — այդ աւելի քան ճշմարիտ է: Բայց ճշմարիտ չէր լինի, եթէ այստեղից եզրակացնէինք, թէ անկաւրելի է մի բարոյականութիւն, որ յաւակնէր համամարդկային լինել: Դա չափազանց պարզ է: Հակառակըն ապացուցելը մեզ կտանէր այն անմիտ եզրակա-

ցութեան, թէ սօցիալիզմը դասակարգերը ոչնչացնելով, կը ոչնչացնէր և պատիւը, և խիղճը, և բարոյականութիւնը: Դասակարգերի ոչնչացման դարը միայն կլինի համամարդկային բարոյականութեան գերագոյն ծաղկման ու տարածման դար: Բայց սօցիալիզմի գաղափարները կրողները ժամանակակից հասարակութեան սահմաններում ևս կարող են և պարտաւոր են լինել բարոյագիտութեան ամենավսեմ համամարդկային սկզբունքների ազդարարներ:

Գիտակցական, քննելով մտածող անհատն իր դասակարգի մօրալը պարզապէս չի ընդունի նրա համար, որ դիպւածական ծնունդն է նրան կապում այդ դասին: Այդ անհատը զանազան դասակարգերի շահերը համախմբում է որևէ դատաստանական աւելի բարձր ատեան: Հնազանդելով այդ գաղափարական վերին դատավարութեան որոշումին, նա բարձրանում է իր դասակարգի մօրալից, խզում է կապերն այդ դասի և նրա շահերի հետ ու յարում մի ուրիշ դասի, որի մէջ տեսնում է հասարակականութեան բարձրագոյն սկզբունքների դաւանութիւն:

Ի հարկէ, առանց պատճառների չէ, որ այս և ոչ ուրիշ անհատի յաջողում է համախմբել ձեռնառու արտաքին և ներքին պայմաններ նրա համար, որպէսզի հասնի այդպիսի գաղափարական բարձրութեան: Բայց այդ ուրիշ խնդիր է: Ամեն ինչ այս աշխարհում պայմանաւորւած է օրէնքի համեմատ: Հերոսներն ու չարագործները, բարձր բարոյական բնաւորութիւններն ու ցոփ մարդիկ, ճշմարտութեան խանդոտ որոնողներն ու առօրեայ սովորութիւնների ստրուկը՝

բոլորն ի վերջոյ, հաւասար են պատճառականութեան գերագոյն ատեանի առաջ: Բայց այդ չի խանգարում, որ նրանք բոլոր միւս գէպքերում իրար հակադրութիւն լինեն. և այդ հակադրութիւնը «իրերի բնական ընթացքի» սառն անտարբերութեան մէջ խեղտելը ընդհանուր ոչինչ չունի գետութեան և գիտական փիլիսոփայութեան հետ:

Եթէ մենք մի բոլոր ցանկանայինք մեր աշխարհայեացքից դուրս վանել սիւքեկտիւ—գաղափարական տարրը, մեզ միայն մի միջոց կմնար փրկելու մեր գործունեայ յեղափոխութիւնը, այն է, ամբացնել նւրան ոչ թէ իւրեալի, այլ «իրերի տարերային ընթացքի» արտաքին անհրաժեշտութեան վրա. այսինքն մեր աշխարհայեացքի մէջ մտցնել նակասագրական լաւաճեմութեան խոշոր մասը: Ու մենք գիտենք, որ այդպիսի ճակատագրական լաւատեսութեան (ֆատալիստական օպտիմիզմի) մի պատկանելի մասը մտքել էին իրենց աշխարհայեացքի մէջ Մարքսը և Էնգելսը: Դա նրանով աւելի հեշտ էր նրանց համար, որ անվստահ վերաբերւելով փիլիսոփայական քննադատութեան, նրանք իրենց աշխարհայեացքի մէջ չընդունեցին նրա պատճառականութեան և օրինականութեան հասկացողութիւնների վերլուծութիւնը:

Պատճառականութեան պարզ ըմբռնողութեան մէջ որոշ չափով մարդակերպական տարր կայ մտքւած: Պատճառը ինչ որ իրական, գործունեայ, ներգործող, հետեանքին հարկադրիչ ճնշում ազդող մի բան է. հետեանքը ինչ որ կրաւորական, տուժող և ենթակայ: Ժամանակակից փիլիսոփայութիւնը մեր-

կացրել է այդ հայեացքի ամբողջ անանկութիւնը: Նա ընդունում է միայն պայմանների հաւաքական միութիւն և պայմանաւորեալը, որով և պայմանաւորեալը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընդհանուր գումար, կապակցութիւն, կամ որոշ մտակարգութիւն, որի մէջ համախմբւել են պայմանները: Ներգործող պատճառի և կրաւորական հետեանքի երկութեան փոխարէն դրւած է մօնիզմը՝ պայմանների մտաւոր մի դասաւորութիւն, որ բոլորովին հաւասար է պայմանաւորեալին: Բնութեան «օրէնքի» սովորական հասկացողութիւնը ենթադրել է տալիս փաստերի համար ինչ որ արտաքին բան, որ սաւառնում է նրանց վրա և վերեից որոշ ընթացք տալիս նրանց: Ժամանակակից փիլիսոփայութիւնը վանել է այդ երկութիւնը, «օրէնքների» մէջ տեսնելով լոկ երեւոյթների ընդհանուր յատկութիւններն ու այդ յատկութիւնների միատեսակ պայմաններում միատեսակ յայտնւելն արտայայտելու մտացածին հասկացողութիւններ: «Օրէնքի» և «օրէնքին ենթակայ իրականութեան» երկութիւնը այստեղ ևս փոխարինւած է փոփոխութիւնների պրօցեսների և հէնց այդ պրօցեսների ընդհանուր յատկութիւնների մօնիզմով, պրօցեսներ, որ մտքով ըմբռնում են ընդհանուր հասկացողութեամբ ձեւակերպում և «օրէնքի» անուն տալիս:

Բաւական է, որ մարդ պատճառականութեամբ հասկացողութիւնների իսկական գոյութեան համար իրեն հաշիւ չտայ—և ահա, առանց ձեր կամքին, մարդկանց արարքների պատճառական դիտողութիւնը կընդունի մինչև, մարդուն օտար, գրախ ոյժերի կրաւոր-

րական խաղալիքի աստիճանին հասցնող ստորացուցիչ բնաւորութիւն, իսկ օրինականութեան հասկացողութեան յարակցումը պատմութեան՝ կառավարչի «գարգացման օրէնքների ոյժերի» հակադրութիւնը ներկայ հաւաքական ձգտումներին, այդ օրէնքների ընթացքը շեղելու և ուղղելու դէպի որոշ նպատակ։ Այստեղից է և այն ճակատագրական կեղևը, որ միայն դժւարացնում է աշխարհայեացքի ըմբոստ ու առողջ յեղափոխական սաղմից օգտւելը։

* * *

Ուղղափառ կողմնակիցներից և տնտեսական մասերիալիզմի դիպլոմատիք դաշնակիցներից մենք պակաս չգիտենք, որ զանազան ժամանակներում Մարքսի և Էնգելսի աշխարհայեացքի գաղափարական միջուկը մի անգամ չէ պատուել մասերիալիստական կեղևը։ Այսպէս օրինակ, Մարքսն ասում էր թէ «այժմ՝ արդարութիւնը վերացել է աշխարհից՝ փիլիսոփայութեան և պատմութեան խնդիրն է—արդարութիւնը հաստատել աշխարհում», այդպէս, նա խօսում էր ապագայ «ազատութեան թագաւորութեան» մասին, ուր կռիւը բնութեան դէմ ե նիւթակտն բարիքների արդիւնաբերութիւնը մարդիկ պիտի կատարեն «այնպիսի պայմաններում, որ գեղեցիկ կերպով արժանավայել ու համապատասխան լինեն նրանց մարդկային բնութեանը»։ ասում էր, թէ միայն այդպիսի տնտեսական կազմը կարող է հիմք ծառայել, որի վրա «մարդկային ընդունակութիւնների զարգացումը կկատարւի. մի զարգացում, որ ինքնին նպատակ է—պատմութեան իսկական թագաւորութիւնը» և այլն և այլն։

Բայց, նախ և առաջ, այս իդեալիստական շեշտերից մի քանիսը ներշնչւած են փիլիսոփայական հովերով, որոնցից Մարքսը և Էնգելսը վերջերս ազատագրւեցին։ Այդպիսով գրանք բնորոշ չեն այն Մարքսի և այն Էնգելսի համար, որոնց ամենքը ճանաչում են։ Երկրորդ, այդ իդեալիստական շեշտերից ուրիշները փիլիսոփայօրէն բոլորովին չեն միացրւած մարքսիզմի միւս մասերի հետ, այլ մեկուսացած, մի կողմն են ընկած մարքսիզմի ընդհանուր տրամաբանութիւնից, ուստի և զրկւած իրենց բոլոր ոյժից։

Ահա թէ ինչու մենք խորապէս համոզւած ենք, որ մարքսիզմի այդ իդեալիստական տարրերը կարող են զարգանալ, ծաւալւել իրենց ամբողջ էութեամբ, դառնալ ոչ թէ պատահական շողեր, այլ աշխարհայեացքի տրամաբանօրէն բաղկացուցիչ մասը, մի պայմանով՝ որ սխտեմից անպայման արմատապէս վերացեն բոլորովին ոչ-փիլիսոփայական բարոյագիտական սկեպտիցիզմը, ճակատագրական տէրմինալօգիայի վիժւածքները, ամեն տեսակի բնագանցութիւն ու նեղ-մատերիալիստական պաշտամունքը։ Այդ գնով միայն մենք կկարողանանք ստանալ ամփոփ սօցիալիստական աշխարհայեացք, որ ժամանակակից գիտական և փիլիսոփայական զարգացման աստիճանի վրա լինի կանգնած։ Մենք հոգեբանօրէն հասկանում ենք մարքսիզմի փիլիսոփայութեան կողմնակիցներին, որոնց համար դժւար է բաժանւել մի բանից, որ յանձն են առել։ Նրանք կգերադասեն կողքերից ու վերից յաւելւածներ անելու, սահմանափակող և տարածող բացատրութիւններ տալու ճանապարհը։

Մենք հասկանում ենք և այն քննադատական վերա-
քննութեան զգուշաւոր դիւանագէտներին, որոնք,
Վանդերվելդի նման, գերադասում են դանդաղ առաջ
շարժւել ամենաչնչին ընդդիմադրութեան գծով: Բայց
հասկանալ չի նշանակում հաւանել: Ինչպէս և լինի,
ներանք բոլորն էլ, մի քանիսը գիտակցաբար, միւս-
ներն անգիտակցաբար՝ իրենց աշխարհայեացքի մէջ
մտցնում են թուլամորթ ու զառամեալ կօմպրօմիսի
տարրեր: Սակայն, եթէ իրական գործունէութեան
մէջ ձեռնառու կօմպրօմիսը կարող է շահաւէտ լինել,
կօմպրօմիսը տեսական աշխարհում, մտքի, գաղա-
փարների ասպարիզում—ծայրահեղ խորշելի է և
տկար: Նա տանում է դէպի հարթ, մակերևոյթային
էկլեկտիզմը: Իսկ մեզ էկլեկտիզմը չէ հարկաւոր, այլ
ամբողջական, սինթետիքական աշխարհայեացքը:
Սօցիալիզմը պարտաւոր է լինել գաղափարա-փիլիսո-
փայական հզօր ոյժ, որ շաղկապէ գոյութիւնների
հետազօտութեան առողջ ընթացիկը ներանց գնահա-
տութեան և ազդու բարենորոգութեան զօրեղ իդեա-
լականութեան հետ: Նա պարտաւոր է լինել իսկա-
կան յեղափոխական աշխարհայեացք, միաժամանակ և
իրականութեան փիլիսոփայութիւն և ներգործու-
թեան փիլիսոփայութիւն:

Գ. Նին:

Յովհաննէս Դաւթեանի հրատարակութեամբ լոյս են
տեսել՝

1. Մ. Գօրկիյ, Մական Զուգրա, թարգմ. Ս. Բաբիեան 10 կ.
2. Ս. Բաբիեան, Բանաստեղծութիւններ 20 »
3. Լ. Անդրէեւ, Անդունդը, թարգմ. Ս. Բաբիեան . . 10 »
4. Папазянъ Луръ да Луръ. Нагой дервишъ, թարգմ.
Հայերէնից Վ. և Ս. Բաբիեաններ 12 »
5. Գիւլի դը Մօպսսան, Մի կեանք, թարգմ. Ս. Տէր-
Անանեան 1 ր.—
6. А. Кусочекъ хлѣбца, Пѣтухъ, թարգմ.
Հայերէնից Վ. Բաբիեան 10 »
7. Ա. Անգեղակոյ, Հանրապետութիւն, թարգմ. Ս.
Տէր-Անանեան 5 »
8. Ա. Բեբել, Քրիստոնէութիւնը և սօցիալիզմը, թարգմ.
Ս. Տէր-Անանեան 10 »
9. Ս. Բուսօլա, Զւիցերիա ազատ ժողովրդական հան-
րապետութիւն թարգմ. Ս. Տէր-Անանեան . 15 »
10. Վ. Բրակէ, Կորչին սօցիալ-դեմօկրատները, թարգմ.
Մ. Տ. Շւոտ 12 »
11. Բ. Ս.-ի, Աշխատանք և կապիտալ, թարգմ. Ա. Յով-
հաննիսեան 20 »
12. Է. Վանդերվելդ, Իդեալականութիւնը Մարքսիզմի
մէջ, թարգմ. Ս. Տէր-Անանեան 20 »

Տպագրւում են և շուտով լոյս կտեսնեն

13. «Современная армянская литература» II.
14. ~~Ս. Տէր-Անանեան~~, Սօցիալիզմի վերջնական իդեալը և ա-
մենօրեայ կոիւր:

Դիմել՝ հրատարակչին—Армянскъ (Таври-
ческ. губерн.) Ивану Давидову և Կովկասի յայտ-
նի գրավաճառներին:





ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0184093

